



Международная
организация
труда



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ

OCCUPATIONAL SAFETY AND HEALTH

NATIONAL PROFILE

REPUBLIC OF ARMENIA



International
Labour
Organization

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ

OCCUPATIONAL SAFETY AND HEALTH

REPUBLIC OF ARMENIA

NATIONAL PROFILE

©Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2008

Առաջին հրատարակություն, 2008

Աշխատանքի միջազգային գրասենյակի հրատարակությունները պաշտպանված են հեղինակային իրավունքով՝ ըստ Հեղինակային Իրավունքի մասին համաշխարհային կոնվենցիայի Արձանագրություն 2-ի: Այնուամենայնիվ, դրանցից համառոտ հատվածներ կարող են արտատպվել առանց թույլտվություն ստանալու, պայմանով, որ հղում կատարվի աղբյուրին: Արտատպման կամ թարգմանության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ է դիմել հետևյալ հասցեով. ILO Publications (Rights and Permissions), International Labour Office, CH-1211, Geneva 22, Switzerland, կամ էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեով. pubdroit@ilo.org: Աշխատանքի միջազգային գրասենյակը ողջունում է նման դիմումները:

Գրադարանները, հաստատությունները կամ մտավոր սեփականության կազմակերպություններում գրանցված այլ օգտագործողներ կարող են պատճենել դրանք՝ այդ նպատակով ձեռք բերած արտոնագրի հիման վրա: Չոր երկրում մտավոր սեփականության կազմակերպությունների մասին տեղեկություն ստանալու համար այցելեք հետևյալ ինտերնետային կայքը. www.iffro.org.

Աշխատանքի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում - Ազգային Նկարագիր - ԱՄԿ,

2008, 63 էջ/թարգմանություն ռուսերենից

ISBN (տպագիր հրատարակություն),

ISBN (էլեկտրոնային հրատարակություն)

International Labour Office; ILO Subregional Office for Eastern Europe and Central Asia
guide / occupational safety / occupational health /safety management 13.04.2

ILO Cataloguing in Publications data

Անգլերեն թարգմանությունը՝ հետևյալ հրատարակությունում.

Occupational Safety and Health in the Republic of Armenia, – National Profile. – ILO, 2008,

ISBN (print);

ISBN (web.pdf)

Ազգային նկարագիրը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և սոցիալական գործընկերների հետ համագործակցության շրջանակում, ԱՄԿ-Ֆինլանդիա տեխնիկական համագործակցության «Անվտանգ աշխատանքի և հավասար հնարավորությունների խթանում» ՀՀ փոքր և միջին ձեռնարկություններում» ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

Միավորված Ազգերի Կազմակերպությունում կիրառում գտած անվանումները և սույն հրատարակության նյութի շարադրանքը չեն արտահայտում Աշխատանքի միջազգային գրասենյակի որևէ կարծիք որևէ երկրի, շրջանի կամ տարածքի կամ նրանց իշխանությունների իրավական կարգավիճակի, ինչպես նաև դրանց սահմանների վերաբերյալ: Ստորագրություն պարունակող հոդվածներում, հետազոտություններում և այլ ստեղծագործություններում արտահայտված կարծիքների պատասխանատվությունը կրում են բացառապես դրանց հեղինակները, և հրատարակման փաստը չի նշանակում, որ Աշխատանքի միջազգային գրասենյակը սատարում է շարադրված կարծիքները: Կազմակերպությունների, առևտրային արտադրանքների և գործընթացների հիշատակումը չի նշանակում Աշխատանքի միջազգային գրասենյակի հավանությունը դրանց նկատմամբ, ինչպես նաև որոշակի կազմակերպության, առևտրային արտադրանքի կամ գործընթացի վերաբերյալ հիշատակման բացակայությունը չի նշանակում դրանց մերժումը: Աշխատանքի միջազգային գրասենյակի հրատարակությունները և դրանց էլեկտրոնային տարբերակները վաճառվում են շատ երկրների խոշոր գրախանութներում կամ տեղական գրասենյակներում. դրանք կարելի է ձեռք բերել նաև Աշխատանքի միջազգային գրասենյակի հրատարակչական բաժնից.

ILO Publications, International Labour Office, CH-1211

Geneva 22, Switzerland. Նույն հասցեից կարելի է ստանալ ԱՄԿ հրատարակությունների անվճար կատալոգը կամ վերջին հրատարակությունների անվանացանկը՝ ներառյալ էլեկտրոնային փոստով (pubvente@ilo.org):

Այցելեք մեր ինտերնետային կայքը. www.ilo.org/publns.

Տպագրված է Հայաստանում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ՀԱՄԱՐՈՑ ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ	7
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	8
1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ	10
1.1. ՀՀ սահմանադրությունը աշխատանքի պայմանների և պաշտպանության մասին	11
1.2. Աշխատանքի պաշտպանության հիմնական օրենքները	11
1.3. Աշխատանքի պաշտպանության մասին հիմնական ենթաօրենսդրական ակտերը	13
1.4. Աշխատանքի պաշտպանության պահանջներ պարունակող ԱՄԿ-ի կոնվենցիաները և այլ միջազգային պայմանագրերը	14
1.5. Աշխատանքի պաշտպանության և անվտանգության պահանջների ապահովման հարցերին վերաբերող այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր	14
2. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ	15
2.1. Տեխնիկական չափորոշիչները, նորմերը և կանոնները.....	15
2.2. Աշխատանքի պաշտպանության համակարգի նորմատիվային փաստաթղթերը	15
2.3. ԱՄԿ-ի տեխնիկական չափորոշիչների և գործնական կանոնների ձեռնարկների վրա հիմնված տեղեկատվական նյութեր	17
3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	18
3.1. Աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները	18
3.2. Օրենքների և նորմատիվների ստեղծման հիմնական մեխանիզմները.....	18
3.2.1. Իրավական պրակտիկայի կարգավորման մեխանիզմները - աշխատանքի տեսչությունը և պետական վերահսկողության այլ ձևեր	19
3.2. Աշխատանքի պաշտպանության ազգային ծրագրի ձևավորումը.....	21
3.3. Գործատուի գործունեության կարգավորման տնտեսական մեթոդները	22
3.4. Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները	22
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ	23
4.1. Ազգային մակարդակ	24
4.2. Տարածքային և ճյուղային մակարդակներ	24
4.3. Կորպորատիվ մակարդակ /գործատուի մակարդակ	24
4.4. Հասարակական /ոչ պետական վերահսկողության կազմակերպումը	26

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱԵՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.	
ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	27
5.1. Պետական մարմինները, որոնց պարտականությունների մեջ են մտնում աշխատանքի պաշտպանության հարցերը	27
5.1.1. Կառավարման ազգային մարմինները	27
5.1.2. Աշխատանքային օրենսդրության իրագործումը վերահսկող ազգային մարմինները	27
5.1.3. Արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից սոցիալական ապահովագրության ազգային մարմինները	29
5.1.4. Բնակչության առողջապահության, արտադրության անվտանգության և այլ նմանատիպ ոլորտների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող ազգային մարմինները	30
5.2. Աշխատանքի պաշտպանության ոլորտում գործող ազգային գիտահետազոտական և նախագծային հիմնարկները (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ)	31
5.2.1. Աշխատանքի պաշտպանության, անվտանգության, հիգիենայի և առողջապահության ոլորտում գործող պետական գիտահետազոտական և նախագծային հիմնարկները (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ)	31
5.2.2. Աշխատանքի պաշտպանության, անվտանգության, հիգիենայի և առողջապահության ոլորտում գործող ոչ պետական գիտահետազոտական և նախագծային հիմնարկները (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ)	32
5.2.3. Աշխատանքի պաշտպանության կենտրոնները (աշխատանքի հիգիենայի ծառայություններ)	32
5.2.4. Կանխարգելման կենտրոնները	32
5.3. Աշխատանքի անվտանգության և արտադրության ոլորտում մասնագիտական կրթությունը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը և տեղեկատվական-բացատրական աշխատանքը	33
5.3.1. Բարձրագույն մասնագիտական և հետբուհական (ասպիրանտուրա) կրթության ծրագրերը	33
5.3.2. Կրթական հաստատությունների կողմից իրականացվող լրացուցիչ կրթության ծրագրերը	33
5.3.3. Գործատուների և աշխատողների միությունների կողմից կազմակերպվող ուսուցումը	33
5.3.4. Գործատուների կողմից կազմակերպվող ուսուցումը	35
5.3.5. Տեղեկատվական-բացատրական աշխատանքով զբաղվող կառույցները	37
5.4. Մասնագիտացված գիտական, տեխնիկական և բժշկական հաստատություններ, որոնք կապված են աշխատանքի պաշտպանության տարբեր ասպեկտների հետ	37
5.4.1. Ստանդարտացման մարմինները	37
5.4.2. Ապահովագրական մարմինները	39
5.4.3. Վտանգների և ռիսկերի գնահատման մեջ մասնագիտացած մարմինները	39
5.4.4. Արտակարգ իրավիճակներում փրկարար գործողություններ իրականացնող մարմինները	39
5.5. Աշխատանքի պաշտպանության հետ կապված աշխատակիցները	40

5.5.1. Աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու ազգային պետական մարմինների աշխատակիցները	40
5.5.2. Աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու տարածքային պետական մարմինների աշխատակիցները	39
5.5.3. Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու աշխատակիցները	39
5.5.4. Գործատուների աշխատանքի պաշտպանության ծառայությունների աշխատակիցները	39

6. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԺՔԱՆՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԴԻՆԱՄԻԿԱՆ

42	
6.1. Հիվանդությունները և վնասվածքները՝ որպես արտադրական վնասվածքներ և մասնագիտական հիվանդություններ որակելու հիմքերը	42
6.2. Արտադրական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների հիմնական ցուցանիշերը	44
6.3. Արտադրական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների հաշվառման հիմնական ձևերը	44
6.4. Վիճակագրական տվյալների հավաքման հիմնական ձևերը	45
6.5. Գրանցված արտադրական վնասվածքների դժբախտ պատահարների թիվը	45
6.6. Գրանցված արտադրական վնասվածքների թիվը	45
6.7. Գրանցված մասնագիտական հիվանդությունների թիվը	45
6.8. Աշխատանքի անբարենպաստ պայմաններ ունեցող աշխատատեղերում աշխատողների թիվը	45
6.9. Հաշվետվության ոչ լիարժեքության մասշտաբի գնահատումը	47

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐՐՏՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ և ՊԱՐԲԵՐՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ. ԱՌԱՆՁԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

48	
7.1. Պարբերական միջոցառումներն ազգային մակարդակում	48
7.1.1. Ազգային նախաձեռնություններ	48
7.1.2. Նախաձեռնություններն արտադրության մեջ	48
7.1.3. Աշխատանքի պաշտպանության ոլորտում արհմիությունների նախաձեռնություններն ու գործունեությունը	49
7.2. Միջազգային համագործակցություն	50
7.2.1. Աշխատանքի պաշտպանության համաշխարհային օրը	50
7.2.2. Համագործակցության պայմանագրերն ու ծրագրերն ԱՄԿ-ի և այլ միջազգային գործակալությունների ու պետությունների(նրանց միությունների) հետ	50
7.2.3. ԱՄԿ-ի աշխատանքի պաշտպանության տեղեկատվական կենտրոնների և ազգային կենտրոնների գործունեությունը	51

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ	52
9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	53
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	54
1. Աշխատանքի պաշտպանության և արտադրության անվտանգության հիմնական օրենքներն ու նորմատիվ-իրավական ակտերը	54
2. Աշխատանքի պաշտպանությանն ու արտադրության անվտանգությանը վերաբերող պաշտոնական կայքերի և այլ տեղեկատվական ռեսուրսների թվարկում.....	56
3. ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի մարդկության զարգացման մասին 2007թ. գեկույցի համաձայն, Հայաստանը 177 երկրների մեջ 83-երորդ տեղում է.	56
4. ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի մի քանի ցուցանիշեր, 2006թ..	57
5. ՀՆԱ-ի աճի տեմպերը (%).....	58
6. Աշխատուժն Հայաստանում:	58
7. ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսները (1000 մարդ).....	58
8. Զբաղվածների միջին տարեկան թվաքանակն ըստ տնտեսության ճյուղերի (1000 մարդ).....	59
9. Զբաղվածների և գործազուկների բաշխվածությունն ըստ սեռի (1000 մարդ).....	59
10. 2005թ. զբաղվածների թվաքանակը տնտեսության ոլորտներում և ճյուղերում. 2005թ (1000 մարդ)	61
11. Բնակչության բաշխվածությունն ըստ սեռա-տարիքային սկզբունքի 01.01.06 (1000 մարդ).....	61
12. Տնտեսական ազատության ցուցիչը	62
13. Արտահանման տարեկան աճն 2002-2006թթ-ին 2001թ համեմատությամբ	62
14. Սասնազիտական հիվանդությունների դինամիկան.....	62

«Աշխատանքի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» ազգային նկարագիրը մշակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի միջտարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցության շրջանակում և պատրաստվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի և ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության մի խումբ փորձագետների կողմից:

«Աշխատանքի պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում» ազգային նկարագրի բովանդակությունն հավանության է արժանացել սոցիալական գործընկերների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի և ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության կողմից:

Ազգային նկարագրում տրված են տեղեկություններ աշխատանքի պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության ձևավորման մեխանիզմների, օրենսդրության, սոցիալական գործընկերության կառուցվածքի, աշխատանքի պաշտպանության ոլորտում սոցիալական գործընկերների գործունեության, աշխատանքային ռեսուրսների, մասնակիցների և շահագրգիռ կողմերի, աշխատանքի պաշտպանության վիճակագրական տվյալների ու ցուցանիշների, ընդհանուր ժողովրդագրական տվյալների, ոլորտի հիմնախնդիրների ու դժվարությունների, ինչպես նաև աշխատանքի պաշտպանության ոլորտում երկրի հետագա զարգացման պահանջների մասին:

Տվյալ տեղեկատվությունը նաև հիմք է հանդիսանում աշխատանքի պաշտպանության ոլորտում ազգային քաղաքականության և ծրագրերի հետագա ձգձգումն և զարգացման համար:

Ազգային նկարագրի կառուցվածքն առավելագույն չափով համապատասխանում է ԱՄԿ-ի հանձնարարականներին: Այստեղ ընդգրկված է նաև որոշ լրացուցիչ տեղեկատվություն, որը կնպաստի ՀՀ-ում աշխատանքի պաշտպանության համակարգի հետ կապված իրավիճակն առավել լիարժեք պատկերացնելու համար:

Տվյալ փաստաթուղթն հանդիսանում է վերլուծական նկարագրի տպագիր տարբերակը: Էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել www.mss.am, www.umba.com .ինտերնետային կայքերում:

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Պաշտոնական անվանումը:

Հայաստանի Հանրապետություն

Մայրաքաղաքը. Երևան

Մեծ քաղաքները. Գյումրի, Վանաձոր

Պետական լեզուն. հայերեն

Կրոն. քրիստոնեություն. հայկական ուղղափառ լուսավորչական եկեղեցի

Դրամական միավորը. դրամ, ներդրվել է 1993թ

Բնակչությունը. 3,210,000 մարդ, (2001թ.)

Ազգագրական կազմը. հայեր– 96%

Ազգային փոքրամասնությունները. ռուսներ, եզդիներ, քրդեր, ասորիներ, հույներ, ուկրաինացիներ, հրեաներ և այլն

Տարածքը. 29.74 հազ. կմ²

Միջին բարձրությունը ծովի մակարդակից. 1,800 մետր

Ամենաբարձր գագաթը. Արագած(4,090 մետր)

Աշխարհագրական կոորդինատները.

հարավում՝ 38° 50' հյուսիսային լայնության,

հյուսիսում՝ 41° 20' հյուսիսային լայնության,

արևմուտքում՝ 43° 30' արևելյան երկայնության,

արևելքում՝ 46° 00' արևելյան երկայնության.

Հարևան երկրները

հյուսիսում՝ Վրաստան,

արևելքում և հարավ-արևմուտքում՝ Ադրբեջան,

հարավում՝ Իրան,

արևմուտքում՝ Թուրքիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

21.09.1991թ. Հայաստանում անցկացվեց անկախության հանրաքվե: Հանրաքվեի արդյունքների համաձայն (99% –կողմ) Հայկական ԽՍՀ-ի Պերագույն խորհուրդն ընդունեց «Անկախության մասին հռչակագիրը» և հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Հայաստանի Հանրապետությունն անկախ, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Պետական կառավարումն իրականացվում է սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, որոնք հիմնված են օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Սահմանադրությունը

Ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեի միջոցով:

Լրացումներով և փոփոխություններով ընդունվել է 2005թ. նոյեմբերի 27-ին՝ հանրաքվեի միջոցով:

(Հայաստանի Հանրապետության սահմանադրություն)

Կառավարման համակարգը

Հանրապետության նախագահը պետության գլուխն է:

Հանրապետության Նախագահը հետևում է սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության Նախագահը Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Հանրապետության նախագահն ընտրվում է ՀՀ քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:

Գործադիր իշխանությունը

Գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը: ՀՀ կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: ՀՀ Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա, ՀՀ նախագահը վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: ՀՀ նախագահը նաև հաստատում է կառավարության կառուցվածքը՝ վարչապետի ներկայացմամբ, նշանակում և ազատում է կառավարության անդամներին:

Օրենսդիր իշխանությունը

Բարձրագույն օրենսդիր իշխանությունը ՀՀ Ազգային ժողովն է, որը կազմված է 131 պատգամավորներից: Ազգային ժողովն ընտրվում է համաժողովրդական ընտրությունների միջոցով, հինգ տարի ժամկետով:

Ղատական իշխանությունը.

Արդարադատությունն ՀՀ-ում իրագործվում է միայն դատարանի կողմից՝ ՀՀ սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Վարչական բաժանումը.

Հայաստանի Հանրապետությունում վարչատարածքային միավորներ են մարզը և համայնքը: Երևանը նույնպես համայնք է: ՀՀ տարածքը բաժանված է տասը մարզերի և Երևան քաղաքի: ՀՀ մարզերում պետական կառավարման ոլորտների հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ նախագահի հրամանագրերով և այլ իրավական ակտերով:

Վիճակագրական տվյալները տրված են հավելվածներում:

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

1.1. ՀՀ սահմանադրությունն աշխատանքի պաշտպանության և պայմանների մասին

ՀՀ սահմանադրության 32 հոդվածի համաձայն (2005թ. նոյեմբերի 27)՝ «Յուրաքանչյուրն ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի անցկացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով: Հարկադիր աշխատանքն արգելվում է»:

ՀՀ սահմանադրության 48 հոդվածի 2-րդ մասի համաձայն պետության հիմնական խնդիրներից մեկը բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը նպաստելն է:

1.2. Աշխատանքի պաշտպանության բնագավառի հիմնական օրենքները

Աշխատանքի պաշտպանության բնագավառի հիմնական օրենքները տրված են 10.1.հավելվածում:

Աշխատանքի պաշտպանության հիմնարար սկզբունքները, որոնք նախատեսում են յուրաքանչյուր աշխատողի՝ աշխատանքի արդար պայմաններ ունենալու իրավունքները (ներառյալ աշխատանքի անվտանգության, հիգիենայի պահանջներին համապատասխանող աշխատանքի պայմանների և հանգստի), ձևակերպված են 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված և 2005թ. հունիսի 21-ին ուժի մեջ մտած ՀՀ աշխատանքային օրենսգրքի ներքոթվարկյալ հոդվածներում.

- ◆ Հոդված 208. Աշխատողին պատկանող գործիքների, աշխատանքային հագուստի մաշվածության դիմաց հատուցումը
- ◆ Հոդված 242. Աշխատողների անվտանգությունը և առողջությունը
- ◆ Հոդված 243. Աշխատողների անվտանգ աշխատանքի իրավունքը
- ◆ Հոդված 244. Աշխատանքի նորմալ պայմանների ապահովումը
- ◆ Հոդված 245. Աշխատավայրի կահավորումը
- ◆ Հոդված 246. Աշխատանքի միջոցները

◆ Հոդված 247. Պաշտպանությունը վտանգավոր քիմիական նյութերի ազդեցությունից

◆ Հոդված 248. Աշխատանքի անվտանգ կատարման կազմակերպումը

◆ Հոդված 249. Պարտադիր բժշկական զննությունը

◆ Հոդված 250. Աշխատանքի ժամանակավորապես դադարեցումը

◆ Հոդված 251. Կազմակերպության սանիտարա-հիգիենիկ սենյակները

◆ Հոդված 252. Գործատուի ատեստավորումը

◆ Հոդված 253. Աշխատողների մասնակցությունն աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման միջոցառումների իրականացմանը

◆ Հոդված 254. Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության հարցերով աշխատողների հրահանգավորումը և ուսուցումը

◆ Հոդված 255. Աշխատողների ապահովումը պաշտպանության միջոցներով

◆ Հոդված 256. Աշխատողների բուժօգնության կազմակերպումը

◆ Հոդված 257. Մինչև 18 տարեկան անձանց աշխատանքը

◆ Հոդված 258. Մայրության պաշտպանությունը

◆ Հոդված 259. Աշխատող հաշմանդամների անվտանգության և առողջության երաշխիքները

◆ Հոդված 260. Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին հայտնելը

◆ Հոդված 261. Դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների ծառայողական քննությունը

◆ Հոդված 262. Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման նկատմամբ իրականացվող հսկողությունն ու վերահսկողությունը:

ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (հոդված 234) նախատեսում է գործատուի նյութական պատասխանատվություն, եթե աշխատողն ստացել է մասնագիտական հիվանդություն կամ վնասվածք կամ մահացել է և ապահովագրված չի եղել դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից:

Գործատուն հատուցում է նրանց պատճառված վնասը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված, ինչպես նաև ՀՀ կառավարության 15.11.1992թ. «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների(անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին» թիվ 579 որոշմամբ սահմանված կարգով:

Կազմակերպության լուծարման դեպքում տուժածին վնասի հատուցման պարտականություններն անցնում են կազմակերպության իրավահաջորդին (հոդված 235):

Մինչև 2004թ. օգոստոսի 1-ը ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների(անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման,

մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին» թիվ 579 որոշման համաձայն(կետ 16)՝ կազմակերպության լուծարման դեպքում տուժածներին վնասի հատուցումը տրվում էր սոցիալական ապահովության մարմինների կողմից, պետական բյուջեի միջոցների հաշվին: ՀՀ կառավարության 2004թ. հուլիսի 22-ի թիվ 1094 որոշման համաձայն այդ կարգն ուժը կորցրած է ճանաչվել:

2004թ. օգոստոսի 1-ից լուծարված ձեռնարկություններում տուժածների փոխհատուցման հարցը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որի 1086 հոդվածի համաձայն սահմանված կարգով առողջությանը կամ կյանքին վնաս պատճառելու մեջ պատասխանատու ճանաչված կազմակերպության լուծարման դեպքում համապատասխան գումարները, տուժածներին վճարելու համար, պետք է գանձվեն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Սակայն առ այսօր համապատասխան նորմատիվ ակտեր ընդունված չեն և որոշված չէ գումարների գանձման մեխանիզմը, չկա վնասի հատուցումն իրագործող մարմին: Այսպիսով, 2004թ. օգոստոսի 1-ից հետո լուծարված և իրավահաջորդ չունեցող կազմակերպություններում վնաս կրած անձինք հատուցում չեն ստանում արտադրական վնասվածքների կամ մասնագիտական հիվանդությունների համար: 2007թ. հունվարի 1-ի դրությամբ կա այդպիսի 800 մարդ:

2006թ. հանրապետությունում աշխատողներին, աշխատանքային պարտականությունները կատարելիս ստացած վնասվածքների, ինչպես նաև առողջությանը պատճառված և մասնագիտական հիվանդություններից կրած վնասների փոխհատուցման համար ծախսերը կազմել են 308,3 մլն դրամ, որից՝ ժամանակավոր անաշխատունակության համար տրվող նպաստները՝ 210,2 մլն դրամ, կորցրած աշխատավարձի փոխհատուցումը՝ 35,2 մլն դրամ, միանվագ նպաստները՝ 17,2մլն դրամ, բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական ծախսերը՝ 6,3 մլն դրամ:

1.3. Աշխատանքի պաշտպանության հիմնական իրավական ենթաօրենսդրական ակտերը

ՀՀ-ում աշխատանքի անվտանգության և պաշտպանության պահանջները սահմանված են նորմատիվ-իրավական ակտերով, որոնք սահմանում են աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանմանն ուղղված կանոնները, ընթացակարգերն ու չափանիշերը, որոնք պարտադիր են ՀՀ տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Հիմնական նորմատիվ-իրավական ակտերը տրված են 10.1. հավելվածում: Հանրապետությունում գործող նորմատիվ-իրավական ակտերը միջճյուղային բնույթ ունեն և ենթակա են պարտադիր կատարման տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում:

Ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում մշակվում են հետևյալ միջճյուղային նորմատիվ-իրավական ակտերը.

- ◆ «Հրահանգ կազմակերպություններում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ծառայությունների մասին»
- ◆ «Հրահանգ ՀՀ կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության աշխատակիցների մասնագիտական պատրաստության մակարդակի գնահատման մասին»:

1.4. Աշխատանքի պաշտպանության պահանջներ պարունակող վավերացված ԱՄԿ կոնվենցիաները և այլ միջազգային պայմանագրեր

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ԱՄԿ ներքոհիշյալ կոնվենցիաները, որոնք կարգավորում են աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերը.

- ◆ «Արտադրական մեծ վթարների կանխարգելման մասին» 174, 20.11.1995
 - ◆ «Հանքերում աշխատանքի անվտանգության և հիգիենայի մասին» 176, 12.10.1998
 - ◆ «Արտադրությունում դժբախտ պատահարների դեպքում աշխատողների փոխհատուցման մասին» 17, 25.10.2004
 - ◆ «Արտադրության և առևտրի մեջ աշխատանքի տեսչության մասին» 81, 25.10.2004
 - ◆ «Ձեռնարկության անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 173, 28.02.2005
 - ◆ «Մասնագիտական հիվանդությունների դեպքում աշխատողների փոխհատուցման մասին» 2iv18, 28.02.2005
 - ◆ «Աշխատանքի վիճակագրության մասին» 160, 13.12.2004
 - ◆ «Մանկական աշխատանքի արգելման և նրա վատթարագույն ձևերի անհապաղ վերացման մասին» 182, 22.03.2005
 - ◆ «Վճարովի արձակուրդի մասին» 132, 13.10.2005
 - ◆ «Աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքի մասին» 138, 03.10.2005
- 21.01.2004թ.-ին վավերացվել է վերանայված Եվրոպական սոցիալական Խարտիան (հոդ. 2, հոդ. 3 կետ 1, հոդ. 4 կետեր 2-5, հոդ.5, հոդ.6-8, հոդ.12 կետ 1.3, հոդ.13 կետեր 1,2, հոդ.15 կետեր 2,3, հոդ.17-20, հոդ. 22, հոդ. 24, հոդ. 27-28):

1.5. Աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերին առնչվող այլ օրենքներ և ենթօրենսդրական ակտեր

ՀՀ-ում գործում է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է իրավական հարաբերությունները վտանգավոր տնտեսական օբյեկտների անվտանգ շահագործման բնագավառում և ուղղված է այդ օբյեկտներում վթարների կանխարգելմանը:16.11.1992թ. ընդունված «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը և կառավարության «ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության մասին» որոշումը կարգավորում են բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման և հիգիենիկ ու հակահամաճարակային վերահսկողության հարցերը:

2. ՆՈՐՄԱՏԻՎ - ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱՍԱՆԴԱՐՏՆԵՐԸ, ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

2.1. Տեխնիկական ստանդարտներ, նորմեր և կանոններ

ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարները 1992թ. մարտին, պետությունների տարածքներում արդյունաբերության և առևտրի տեխնիկական միասնությունը պահպանելու նպատակով, ստորագրեցին համաձայնագիր ստանդարտացման, չափագրության և հավաստագրման բնագավառում համաձայնեցված քաղաքականություն վարելու մասին: Այդ համաձայնագրով ստեղծվեց ստանդարտացման, չափագրության և հավաստագրման միջպետական խորհուրդ:

Այսօր անցում է տեղի ունենում առանձին, տարբեր չափորոշիչների մշակումից՝ ստանդարտացման ծրագրի մշակման և կիրառման:

Համաշխարհային տնտեսության ինտեգրվելու անհրաժեշտությունը պահանջում է աշխատանքի անվտանգության չափորոշիչների համակարգի կատարելագործում՝ այն միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու և հանրապետությունում միջազգային չափորոշիչները ներդնելու ուղղությամբ:

Ընթացիկ տարում ՀՀ կառավարության 2003-2007թթ. գործունեության միջոցառումների պլանի համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում սկսվել է 2008-2012թթ. ՀՀ-ում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ապահովման ծրագրի մշակումը :

Ծրագրի գերակա ուղղություններից մեկը նորմատիվ բազայի կատարելագործումն է: 2008-2012թթ. նախատեսվում է մշակել և ընդունել 600-ից ավելի ճյուղային կանոններ և չափորոշիչներ, որոնք կկարգավորեն աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերը և կփոխարինեն նախկին ԽՍՀՄ գերատեսչությունների կողմից մշակված, դեռևս գործող աշխատանքի պաշտպանության նորմատիվ-իրավական ակտերին, որոնք չեն համապատասխանում շուկայական տնտեսության և միջազգային չափանիշների պահանջներին:

Աշխատանքներ են տարվում առաջատար ձեռնարկություններում ԱՄԿ աշխատանքի պաշտպանության կառավարման 2001 համակարգի ներդրման ուղղությամբ: Այդ հարցերի և աշխատանքային օրենսդրության աշխատանքի անվտանգության և պաշտպանության մասով պարզաբանումների նպատակով անցկացվել են հատուկ սեմինարներ և խորհրդակցություններ գործատուների և արհմիությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2.2. Աշխատանքի պաշտպանության նորմատիվ փաստաթղթեր

Վերջին տարիներին Հայաստանում աճել է աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերի նկատմամբ ուշադրությունը՝ և պետության, և գործատուների ու արհմիությունների կողմից: Ազդու ձևերից մեկը ժամանակակից, միջազգային չափանիշներին համապատասխանող աշխատանքի պաշտպանության համակարգի մշակումն ու ներդրումն է, որն

առաջժամ սահմանափակ նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անվտանգ տեխնոլոգիաների ներդրման և աշխատանքի անվտանգ պայմանների կատարելագործման հնարավորություն կտա: Այդ ծրագրի իրագործման հարցում որոշակի դժվարություններ կան ինչպես նախարարություններում, գերատեսչություններում, այնպես էլ ձեռնարկություններում համապատասխան օղակի (աշխատանքի անվտանգության բաժիններ) բացակայության կամ թույլ մասնագիտացված լինելու պատճառով: Այդպիսի կառույցներ, եթե կան էլ, կազմված են անբավարար որակավորում ունեցող կադրերից:

Ինչպես արդեն նշվել է, աշխատանքի պաշտպանության հարցերը կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ: Նրանում, մասնավորապես, սահմանված են աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտում գործատուի պարտականությունները, (գլուխ 23, հոդ. 244, 246, 248) որոնց համաձայն ապահովվում են աշխատողների աշխատանքային պարտականությունների ու նորմերի կատարման համար անհրաժեշտ (գլուխ 21, հոդ. 217) աշխատանքային նորմալ պայմաններ:

Այդպիսի պայմաններ հանդիսանում են.

- ◆ մեխանիզմների, սարքավորումների, և աշխատանքի այլ միջոցների սարքին վիճակը

- ◆ տեխնիկական փաստաթղթերով ժամանակին ապահովելը

- ◆ առողջության համար աշխատանքի անվտանգ և անվնաս պայմանները (անվտանգության տեխնիկայի նորմերի և կանոնների պահպանումը, պատշաճ լուսավորությունը, ջեռուցումը, օդափոխությունը, սահմանված նվազագույն նորմաներից ցածր աղմուկը, ճառագայթումը, վիբրացիան և աշխատողի առողջության համար բացասական ներգործություն ունեցող վտանգավոր այլ գործոններ)

- ◆ վտանգավոր սարքավորումների շահագործման նկատմամբ մշտական հսկողության ապահովումը

- ◆ միայն տեխնիկապես նորմալ վիճակում գտնվող աշխատանքային միջոցների շահագործումը

- ◆ աշխատանքի պաշտպանության բոլոր ձևերի ուսուցումը և հրահանգավորումը

- ◆ աշխատողների անվտանգության և առողջության պահպանման մասին ներքին իրավական ակտերի ընդունումը (աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հրահանգներ, աշխատանքների կատարման անվտանգության կանոններ և այլն)

- ◆ աշխատատեղերում ցանկացած ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Աշխատանքի պաշտպանության հետ կապված բոլոր ծախսերը կատարում է գործատուն:

Առողջության պահպանման և անվտանգության պարտադիր պահանջներն՝ ուղղված աշխատանքի տարբեր միջոցների արադրությանը և նրանց համապատասխանությանը, հաստատվում են տեխնիկական չափորոշիչներով և այլ նորմատիվ-իրավական ակտերով:

Աշխատանքի պաշտպանության կառավարումը պահանջում է այդ ուղղությամբ նորմատիվային բազայի էական կատարելագործում: Այդ նպատակով նախատեսվում են հնացած նորմատիվ-իրավական ակտերի վերանայման և նոր, միջազգային չափանիշներին համապատասխանող ճյուղային ակտերի մշակման միջոցառումներ:

Զգացվում է նաև հին ակտերի (դեռ ԽՍՀՄ ժամանակից) վերամշակման, նաև նոր, ինչպես հանրապետական, այնպես էլ ոլորտային նշանակության նորմատիվ ակտերի մշակման անհրաժեշտություն:

Դրանք պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին, ուղղված լինեն աշխատանքի պաշտպանության և հիգիենայի կառավարման համակարգի կատարելագործմանը և ընդգրկեն տնտեսության բոլոր ճյուղերը՝ արտադրություն, ծառայություններ, առևտուր: Հանրապետությունում նախատեսված է 2008-2012թթ. ներդնել 600-ից ավելի միջպետական չափորոշիչ, որոնք հիմք կհանդիսանան կոնկրետ ոլորտների, արտադրանքների, ծառայությունների նկատմամբ անվտանգության պահանջների մշակման համար:

Աշխատանքային օրենսգրքի 35 հոդվածն հաստատագրում է աշխատանքի պաշտպանության և անվտանգության մասին ՀՀ օրենսդրության պահպանման նպատակով պետական վերահսկողությունը, իսկ 34 հոդվածը թույլատրում է աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտում ոչ պետական հասարակական) վերահսկողության իրականացում՝ արհմիությունների կողմից: Բայց, ինչպես նշում են արհմիությունների ներկայացուցիչները, 34 հոդվածը լրամշակման կարիք ունի, քանի որ չի նախատեսում ոչ պետական (հասարակական) վերահսկողության իրականացման կարգն ու մեխանիզմը:

2.3. ԱՄԿ գործնական կանոնների ձեռնարկների և տեխնիկական ստանդարտների վրա հիմնված տեղեկատվական նյութեր

Աշխատանքի միջազգային կազմակերպության տեխնիկական չափորոշիչների հիման վրա նախապատրաստված տեղեկատվական նյութերն ուղղված են բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և գործատուներին՝ որպես գործնական ձեռնարկներ և մասնագետների ու աշխատողների համար տեղեկատվություն: Կազմակերպություններում և ձեռնարկություններում այդ չափորոշիչների պարզաբանման նպատակով անցկացվում են սեմինարներ և ուսուցումներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

3.1. Աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները

Աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է՝

- ◆ աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում ՀՀ պետական նորմատիվ-իրավական ակտերի, պետական չափորոշիչների, կանոնների, նորմերի մշակմանը և ընդունմանը,

- ◆ աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում պետական ծրագրերի մշակմանը,

- ◆ անվտանգ տեխնոլոգիաների և տեխնիկայի մշակմանը և ներդրմանը;

- ◆ արտադրության մեջ դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների հաշվառման կարգի հաստատմանը,

- ◆ ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նպատակով պետական վերահսկողությանը,

- ◆ աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում աշխատողների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությանն ուղղված ոչ պետական վերահսկողության իրականացման աջակցությանը,

- ◆ արտադրական դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդություններից տուժած աշխատողների և նրանց ընտանիքների օրինական շահերի պաշտպանությանը,

- ◆ փոխհատուցման սահմանում՝ ծանր աշխատանքի և աշխատանքի վնասակար կամ վտանգավոր պայմանների համար, եթե աշխատանքի կազմակերպման և արտադրության այժմյան մակարդակում դրանք անհնար է փոխել,

- ◆ աշխատանքի պաշտպանության և պայմանների բարելավման հայրենական և արտասահմանյան առաջավոր փորձի տարածմանը,

- ◆ արտադրական վնասվածքաբանության և մասնագիտական հիվանդությունների, նաև նրանց հետևանքների պետական վիճակագրական հաշվառման կազմակերպմանը,

- ◆ աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցությանը:

3.2. Օրենքների և նորմերի ստեղծման մեխանիզմները

Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտները և նորմատիվ ակտերի ընդունման կարգը սահմանված է 2002թ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ նորմատիվ-իրավական ակտեր ընդունելու իրավունք ունի (ունեն).

- ◆ ժողովուրդը՝ միայն հանրաքվեի միջոցով,

◆ ՀՀ նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը, ՀՀ վարչապետը, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ՀՀ էներգետիկայի կարգավորման հանձնաժողովը, ՀՀ վիճակագրական պետական խորհուրդը, ՀՀ արժեթղթերի հանձնաժողովը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, հեռուստատեսության և ռադիոյի հանրային խորհուրդը, (հետագայում՝ կարգավորող հանձնաժողովներ), ՀՀ պետական ծառայության խորհուրդները, ՀՀ նախարարները, ՀՀ կառավարությանն առընթեր պետական մարմինների ղեկավարները, ինչպես նաև մարզպետները, Երևանի քաղաքապետը, տեղական ինքնակառավարման մարմինները և նրանց ղեկավարները,

◆ ՀՀ սահմանադրական դատարանը՝ ՀՀ սահմանադրությամբ նախատեսված դեպքերում,

◆ ՀՀ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները՝ պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված ակտը բեկանելու մասով, եթե այն հակասում է օրենքին կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին :

Նորմատիվ-իրավական ակտերը չեն կարող ընդունվել այլ պետական մարմինների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների բաժանմունքների, ինչպես նաև պետական հիմնարկների և այլ իրավաբանական անձանց կողմից:

ՀՀ սահմանադրությամբ և գործող օրենսդրությամբ չնախատեսված մարմինների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն:

ՀՀ սահմանադրության ընդունման կամ նրանում փոփոխություններ անելու կարգը, հանրաքվեի միջոցով օրենքների ընդունումը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով, և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկայացվող օրենքների նախագծերի, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի որոշումների նախագծերի մշակման, քննարկման և ընդունման կարգը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով:

ՀՀ Ազգային ժողովում ՀՀ նախագահի կամ ՀՀ կառավարության կողմից առաջարկված որոշումների կամ օրենքների նախագծերի մշակման, քննարկման և ընդունման կարգը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով:

ՀՀ նախագահի հրամանագրերի մշակման, քննարկման և ընդունման կարգը սահմանված է ՀՀ սահմանադրությամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ նախագահի հրամանագրով:

ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների մշակման, քննարկման և ընդունման կարգը սահմանվում է ՀՀ սահմանադրությամբ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ նախագահի հրամանագրով:

ՀՀ միջազգային պայմանագրերի նախապատրաստման, այդ նպատակով բանակցությունների վարման, պայմանագրերի ստորագրման, վավերացման, հաստատման, նրանց միանալու, ժամանակավոր ընդունման, պայմանագրի գործողության կասեցման կամ դադարեցման կարգը սահմանվում է ՀՀ

սահմանադրությամբ, «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգով և ՀՀ միջազգային պայմանագրերով:
ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների ընդունման կարգը սահմանվում է ՀՀ սահմանադրությամբ և «ՀՀ սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով: Աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում ճյուղային նորմատիվների ընդունումն իրագործվում է համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմինների (նախարարությունների և գերատեսչությունների) ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:

Աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտի նորմատիվները սահմանում են աշխատողների կյանքի և առողջության պահպանմանն ուղղված կազմակերպչական, տեխնիկական, տեխնոլոգիական, սանիտարա-հիգիենիկ, ֆիզիկական և այլ նորմեր, կանոններ, արարողակարգեր և չափորոշիչներ:

Կազմակերպությունում աշխատանքի անվտանգության և պաշտպանության հրահանգները մշակում և հաստատվում են գործատուի կողմից՝ աշխատանքի անվտանգության և պաշտպանության ճյուղային նորմատիվների հիման վրա, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված կարգով: Աշխատանքի պաշտպանության նորմերն ու կանոնները սահմանվում են ՀՀ սահմանադրությամբ, աշխատանքային օրենսգրքով, այլ օրենքներով ՀՀ կառավարության որոշումներով:

ՀՀ «Նորմատիվ ակտերի մասին» օրենքի պահանջներից և սկզբունքներից ելնելով, նորմատիվ-իրավական ակտերը, կանոնները, տեխնիկական չափորոշիչներն իրենց լիազորությունների սահմաններում հաստատում են.

- ◆ ՀՀ կառավարությունը;
- ◆ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,
- ◆ ՀՀ առողջապահության նախարարությունը,
- ◆ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը,
- ◆ ՀՀ փրկարար ծառայությունը,
- ◆ ՀՀ բնապահպանության նախարարությունը,

ինչպես նաև այլ ճյուղային նախարարություններ և գերատեսչություններ:

Օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերը մշակելիս, որպես կանոն, հաշվի են առնվում գործատուների և աշխատողների կազմակերպությունների կարծիքներն ու առաջարկները:

3.2.1. Իրավապահական պրակտիկայի կարգավորման մեխանիզմները . աշխատանքի տեսչություն և պետական վերահսկողության այլ ձևեր

Աշխատանքային օրենսդրության և աշխատանքի անվտանգության և պաշտպանության նորմատիվ-իրավական ակտերի պահպանման նպատակով պետական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի տեսչության և հետևյալ լիազորված պետական մարմինների կողմից.

- ◆ ՀՀ առողջապահության նախարարության հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն,

- ◆ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն,
- ◆ ՀՀ էներգետիկայի պետական տեսչություն,
- ◆ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական տեսչություն,
- ◆ ՀՀ տարածքային կառավարման նախարարության պետական հրդեհային տեսչություն,
- ◆ ՀՀ բնապահպանական պետական տեսչություն,
- ◆ ՀՀ կապի և տրանսպորտի նախարարության տրանսպորտային տեսչություն:

3.2. Աշխատանքի պաշտպանության ազգային ծրագրերի ձևավորումը

Սույն նկարագրի պատրաստումն ակնառու դարձրեց Հայաստանում աշխատանքի պաշտպանության գործող համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը: Այստեղ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները,

1. Աշխատանքի պաշտպանության ոլորտում չափորոշիչների ազգային համակարգի ստեղծում և ներդրում
2. Հանրապետության կազմակերպություններում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում ԱՄԿ կողմից առաջարկվող աշխատանքի կառավարման համակարգի, միջազգային չափորոշիչների ներդրում
3. Աշխատողի կյանքին և առողջությանն արտադրության մեջ պատճառված վնասի համար ապահովագրության համակարգի ներդրում
4. Աշխատանքի պաշտպանության ոլորտի նորմատիվ-իրավական դաշտի ապահովում
5. Աշխատանքի անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրների գիտահետազոտական բազայի ձևավորում
6. Աշխատանքի պաշտպանության իրավիճակի մշտական մոնիտորինգի կազմակերպում և իրականացում
7. Աշխատանքի պաշտպանության ոլորտում պետական մարմինների, ծառայությունների, տեսչությունների, լաբորատորիաների, ինչպես նաև ոչ պետական կառույցների գործունեության համակարգում
8. Աշխատանքի պաշտպանության ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման որակապես նոր համակարգի ստեղծում:

Հայաստանում աշխատանքի պաշտպանության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունն ու կարևորությունն հաշվի առնելով, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության և 2007-2011թ.թ. «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի իրագործման պլանի համաձայն նախատեսվում է մշակել և ընդունել աշխատանքի անվտանգության և պաշտպանության ազգային ծրագիր: Աշխատանքի պաշտպանության համակարգի կատարելագործման վերոհիշյալ հիմնական ուղղությունները պետք է ներառվեն ազգային ծրագրում: Հարցերի այդ ողջ կոմպլեքսում ակնկալվում են Աշխատանքի միջազգային կազմակերպության հանձնարարականները և աջակցությունը:

3.3. Գործատուի գործունեության կարգավորման տնտեսական մեթոդներ

Հայաստանում ներկայումս բացակայում են թե որոշակի տնտեսական մեթոդները, որոնք կկարգավորեին գործատուի գործունեությունն աշխատանքի պաշտպանության ոլորտում, թե աշխատանքի անվտանգության և պաշտպանության կատարելագործման համալիր միջոցառումների անցկացման ուղղությամբ գործատուին կողմնորոշելու գործուն մեխանիզմները:

3.4. Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդներ

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները բացակայում են:

4. Սոցիալական գործընկերության մեխանիզմները և գործունեության համակարգումը

«Վաշխատանքային օրենսգրքում հատկապես ընդգծվում են աշխատանքային հարաբերությունների կարգավորման, աշխատավորների շահերի և իրավունքների պաշտպանության, սոցիալական գործընկերության, կոլեկտիվ բանակցությունների, հանրապետական, ճյուղային և տեղական, ինչպես նաև ձեռնարկությունների մակարդակով կոլեկտիվ պայմանագրերի կնքման հարցերը:

Սոցիալական գործընկերությունն աշխատողների(նրանց ներկայացուցիչների) և գործատուների (նրանց ներկայացուցիչների), ինչպես նաև «Վաշխատանքային օրենսդրությամբ սահմանված դեպքերում, «Վ կառավարության փոխհարաբերությունների համակարգ է, որը կոչված է ապահովելու աշխատողների և գործատուների շահերի համաձայնեցվածությունը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում: Սոցիալական գործընկերության հիմնական սկզբունքներն են.

- ◆ կողմերի իրավահավասարությունը,
- ◆ կոլեկտիվ բանակցությունների ազատությունը,
- ◆ կողմերի շահերի հաշվի առնելը և հարգալից վերաբերմունք դրսևորելը,
- ◆ կողմերի և նրանց ներկայացուցիչների կողմից աշխատանքային օրենսդրության և այլ նորմատիվ-իրավական ակտերի պահանջները պահպանելը,
- ◆ կողմերի ներկայացուցիչների լիազորվածությունը,
- ◆ քննարկման արաջարկվող՝ աշխատանքի վերաբերյալ հարցերի ընտրության ազատությունը,
- ◆ պարտավորություններ ստանձնելու կամավորությունը,
- ◆ ընդունվող պարտավորությունների իրատեսական լինելը,
- ◆ կոլեկտիվ պայմանագրերի կատարման պարտադիր լինելը,
- ◆ կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունը,
- ◆ կողմերի կան նրանց ներկայացուցիչների մեղքով կոլեկտիվ պայմանագրի չկատարման համար պատասխանատվությունը:

Սոցիալական գործընկերության կողմեր են հանդիսանում աշխատավորները և գործատուները՝ ի դեմս իրենց ներկայացուցիչների: Եռակողմ սոցիալական գործընկերության դեպքում հավասար հիմունքներով մասնակցում է «Վ կառավարությունը:

«Վ աշխատանքային օրենսդրությամբ սոցիալական գործընկերության համակարգը նախատեսում է հետևյալ մակարդակները.

1. հանրապետական մակարդակ, որը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի բնագավառի հարաբերությունների կարգավորման հիմունքները: Այդ գործընկերության կողմերն են «Վ կառավարությունը, արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը, գործատուների հանրապետական միությունը.

2. Ճյուղային մակարդակ, որը սահմանում է տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղում(ճյուղերում) աշխատանքի բնագավառի հարաբերությունների կարգավորման հիմունքները: Այդ գործընկերության կողմերն են արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և գործատուների համապատասխան ճյուղային միությունը:

3. տարածքային մակարդակ, որը սահմանում է որոշակի տարածքում աշխատանքի բնագավառի հարաբերությունների կարգավորման հիմունքները: Այդ գործընկերության կողմերն են արհեստակցական կազմակերպությունների համապատասխան տարածքային միությունը և գործատուների համապատասխան տարածքային միությունը:

4. Կազմակերպության մակարդակ, որը սահմանում է գործատուի և աշխատողների միջև աշխատանքի բնագավառի որոշակի փոխադարձ պարտավորություններ: Այդ գործընկերության կողմերն են գործատուն և արհմիությունը:

Սոցիալական գործընկերությունը, որպես կանոն, իրականացվում է հետևյալ ձևերով.

- ◆ կոլեկտիվ բանակցությունների վարում՝ կապված կոլեկտիվ պայմանագրի նախագիծ կազմելու և կնքելու հետ,

- ◆ փոխադարձ խորհրդատվությունների անցկացում և տեղեկատվության փոխանակում:

4.1. Ազգային մակարդակ

Ազգային մակարդակում սոցիալական գործընկերության կողմերն են ՀՀ կառավարությունը, ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիան և ՀՀ արդյունաբերողների և գործարարների(գործատուների) միությունը:

ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի և ՀՀ արդյունաբերողների և գործարարների(գործատուների) միության գործունեությունը կարգավորվում են, համապատասխանաբար, «ՀՀ արհմիությունների մասին» և «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքներով:

4.2. Ճյուղային և տարածքային մակարդակներ

Հայաստանում գործատուների ճյուղային և տարածքային միությունների, ինչպես նաև արհմիությունների տարածքային միավորումների բացակայության պատճառով ներկայումս ճյուղային և տարածքային մակարդակներում սոցիալական գործընկերություն գործնականում չի իրականացվում: 27.02.2007թ. «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, ներկայումս գործատուների ճյուղային և տարածքային միությունների ձևավորման աշխատանքներ են տարվում , ինչը թույլ կտա ապահովել գործուն և արդյունավետ սոցիալական գործընկերություն:

4.3. Ձեռնարկության մակարդակ / գործատուի մակարդակ

Այս մակարդակում սոցիալական գործընկերությունն իրականացվում է կոլեկտիվ պայմանագրերի միջոցով:

Կոլեկտիվ պայմանագրի կողմերն են աշխատողների կոլեկտիվի կազմակերպությունները՝ ի դեմս կազմակերպությունում գործող արհեստակցական միության, և գործատուն՝ ի դեմս ձեռնարկության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի:

Ձեռնարկությունում արհմիութենական կազմակերպության բացակայության դեպքում նրա ներկայացուցչական գործառույթներն ու աշխատողների շահերի պաշտպանությունը փոխանցվում են համապատասխան տարածքային կամ ճյուղային արհմիությանը: Այդ դեպքում կոլեկտիվ պայմանագրի կողմեր են հանդիսանում գործատուն և համապատասխան տարածքային կամ ճյուղային արհմիությունը:

Կոլեկտիվ բանակցություններն սկսվում են կամավոր հիմունքով: Նախաձեռնող կարող է լինել ցանկացած կողմ: Բանակցությունների վարման պայմանագրի նախագծի պատրաստման նպատակով կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից կազմվում են հանձնաժողովներ: Կոլեկտիվ բանակցությունների բովանդակությունն ու կառուցվածքը որոշում են կողմերը: Կոլեկտիվ պայմանագրերում կարող են նախատեսվել արտոնություններ, որոնք երաշխավորում են աշխատակազմի կյանքի և աշխատանքի ավելի արժանապատիվ մակարդակ, քան նախատեսված է օրենսդրությամբ: Աշխատողների սոցիալական դրությունը և աշխատանքային պայմանները վառաբարացնող պարտավորությունների ամրագրումն արգելված է:

Բոլոր մակարդակների կոլեկտիվ պայմանագրերում հատուկ ուշադրություն է հատկացվում աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների ստեղծման, շրջակա միջավայրի առողջացման, անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հարցերին:

Կոլեկտիվ պայմանագրերի կնքման կարևորությունն հաշվի առնելով, սկզբնական և ճյուղային արհմիութենական կազմակերպություններին գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակով ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիան մշակել է տնտեսության բոլոր ճյուղերի համար ընդունելի տիպական պայմանագիր, որում մանրակրկիտ մշակված են աշխատավարձի, աշխատանքի պաշտպանության, աշխատանքային ժամանակի և հանգստի, մայրության պաշտպանության և այլ բաժիններ:

Կապված գործատուների տարածքային միությունների՝ դեռևս ձևավորված չլինելու հետ, մարզերում կոլեկտիվ պայմանագրերը կնքվում են ճյուղային արհմիութենական կազմակերպությունների և մարզերի վարչական մարմինների միջև:

2006թ. կնքվել է 6 ճյուղային կոլեկտիվ պայմանագիր.

◆ ՀՀ գյուղատնտեսական համակարգի աշխատողների արհմիութենական կազմակերպությունների ճյուղային միության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև

◆ Առևտրի, հասարակական սննդի, ՀՀ սպառողական կոոպերացիայի և ձեռնարկատիրության աշխատողների արհմիութենական կազմակերպությունների հանրապետական ճյուղային միության և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության միջև

◆ ՀՀ կրթության և գիտության աշխատողների արհմիութենական կազմակերպությունների հանրապետական ճյուղային միության և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև

◆ Կոմունալ-բնակարանային տնտեսության, ծառայությունների ոլորտի աշխատողների արհմիութենական կազմակերպությունների հանրապետական ճյուղային միության և ՀՀ կառավարությանն առընթեր տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի միջև

◆ ՀՀ երկաթուղային աշխատողների արհմիութենական կազմակերպությունների հանրապետական ճյուղային միության և «ՀՀ երկաթուղային ճանապարհ» ՓԲԸ-ի միջև

◆ ՀՀ ավիացիայի աշխատողների Հանրապետական ճյուղային միության և ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության միջև:

2006թ. հանրապետությունում կնքվել է 479 տարածքային կոլեկտիվ պայմանագիր և 2279-ը՝ ձեռնարկություններում, ինչը 13 % ավելին է, քան 2005թ.:

4.4. Ոչ պետական (հասարակական) վերահսկողության կազմակերպում

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34 հոդվածի համաձայն՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ-իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացնում է աշխատանքի պետական տեսչությունը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ պետական մարմիններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 35 հոդվածի համաձայն՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ-իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունն իրականացնում են արհմիությունները, իսկ աշխատողների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ-իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը՝ գործատուները (գործատուների ներկայացուցիչները):

Աշխատանքի պետական տեսչության գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները սահմանված են օրենքով: Սակայն օրենքով կարգավորված չէ այն հարցը, թե արհմիությունների ինչպիսի կառույցներ են իրականացնելու ոչ պետական վերահսկողություն, այդ կառույցների գործառույթները, իրավունքներն ու պարտավորությունները, ինչ իրավական ակտերով պետք է նրանք առաջնորդվեն իրենց գործունեության ընթացքում, որ մարմնի կողմից պետք է հաստատվեն այդ ակտերը: Այս տեսակետից նպատակահարմար է «Աշխատանքի պաշտպանության մասին» և «Աշխատանքային օրենսդրության պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքների ընդունումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ. ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐ

5.1. Պետական մարմինները, որոնց պարտականությունների մեջ մտնում են աշխատանքի պաշտպանության հարցերը

5.1.1. Կառավարման ազգային մարմինները

ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ 1821 որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության համաձայն նախարարության հիմնական խնդիրներից մեկը աշխատանքի ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումն ու իրականացումն է:

5.1.2. Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող ազգային մարմինները

ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ 1821 որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության համաձայն նախարարության հիմնական խնդիրներից է ոչ միայն աշխատանքի ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակումն ու իրականացումը, այլև աշխատանքի պաշտպանության բնագավառում օրենսդրության կիրառման, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ-իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունը:

ՀՀ-ում աշխատանքի պաշտպանության բնագավառում օրենսդրության կիրառման, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ-իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնում է աշխատանքի պետական տեսչությունը, որի աշխատողների թիվը 149 է:

Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է կենտրոնական աշխատակազմի և 11 տարածքային կենտրոնների միջոցով: Կենտրոնական աշխատակազմն ունի չորս բաժին՝ իրավական վերահսկողության, աշխատանքի պաշտպանության պայմանների պահպանման վերահսկողության, վիճակագրության ու վերլուծության և տնտեսական:

Բացի աշխատանքի պետական տեսչությունից, աշխատանքի անվտանգության և պաշտպանության, աշխատողների առողջության և այլ հարցերի վերահսկողությամբ զբաղվում են մի շարք նախարարությունների ենթակայությամբ գործող տեսչություններ, որոնց թվարկումը բերված է աղյուսակում:

Հիմնարկության անվանումը	Աշխ –ի թիվը	Ենթակայությունը	Գործունեության բնութագիրը
ՀՀ աշխատանքի պետական տեսչություն	149	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Աշխատանքային օրենսդրության պահպանման նկատմամբ պետական հսկողություն
Հայաստանի փրկարար ծառայություն. հրշեջ ծառայություն	177	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	Բնական և տեխնածին աղետների կանխարգելման և վերացման, հակահրդեհային անվտանգության, քաղաքաշտպանության ոլորտում միջճյուղային համակարգում, արտադրությունում աշխատանքների կատարման անվտանգության վերահսկողություն
Պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություն	429	ՀՀ առողջապահության նախարարություն	Պետական սանիտարահամաճարակային վերահսկողություն
Բնապահպանական պետական տեսչություն	195	ՀՀ բնապահպանության նախարարություն	Բնության պահպանության նկատմամբ պետական վերահսկողություն
Քաղաքաշինության պետական տեսչություն	96	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Քաղաքաշինության ոլորտում պետական վերահսկողություն
Միջուկային և ռադիոակտիվ անվտանգության պետական ծառայություն	27	ՀՀ էներգետիկայի նախարարություն	Միջուկային և ռադիոակտիվ վտանգի հետ կապված օբյեկտների հսկում և վերահսկողություն
Գյուղտեխնիկայի պետական տեսչություն	15	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Գյուղտեխնիկայի անվտանգ շահագործման վերահսկում
Սննդի և անասնաբուժական պետական տեսչություն	168	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Մթերային ապրանքների անվտանգության հսկողություն և վերահսկում
Էներգետիկայի պետական տեսչություն	51	ՀՀ էներգետիկայի նախարարություն	Էներգետիկայի ոլորտում պետական վերահսկողություն
Տրանսպորտային պետական տեսչություն	29	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	Տրանսպորտի ոլորտում անվտանգության նկատմամբ պետական վերահսկողություն

Նախարարություններ և գերատեսչություններ

Անվանումը	Ենթակայությունը	Գործունեության բնութագիրը
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Հանրապետության տարածքում օրենքի և այլ նորմատիվ-իրավական ակտերի ճշգրիտ և միանշանակ իրագործման բարձրագույն հսկողություն
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Աշխատանքի ոլորտում պետական քաղաքականության մշակում և իրագործում, աշխատանքային և աշխատանքի պաշտպանության ոլորտի օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Սանիտարա-հիգիենիկ, հակահամաճարակային, բուժա-կանխարգելիչ համակարգային միջոցառումների մշակում, բժշկական միջին և բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Էներգետիկայի ոլորտում աշխատանքի անվտանգության և պաշտպանության նորմատիվ-իրավական ակտերի մշակում
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Վտանգավոր արտադրական օբյեկտներում անվտանգության տեխնիկայի ճյուղային նորմատիվ-իրավական ակտերի մշակում
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Տրանսպորտի ոլորտում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ճյուղային նորմատիվ-իրավական ակտերի մշակում
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Գյուղատնտեսության ոլորտում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ճյուղային նորմատիվ-իրավական ակտերի մշակում
«Վճռակալության նախարարություն»	«Վճռակալության նախարարություն»	Քաղաքաշինության ոլորտում աշխատանքի անվտանգության և պաշտպանության ճյուղային նորմատիվ-իրավական ակտերի մշակում

5.1.3. Արտադրությունում դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդացումներից սոցիալական ապահովագրության ազգային մարմիններ

Հանրապետությունում այդպիսի մարմիններ ներկայումս չկան:

«Վճռակալությունում քննարկվում է «Դժբախտ պատահարներից և մասնագիտական հիվանդացումներից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից սոցիալական ապահովագրության լիազոր մարմնի ստեղծում:

5.1.4. Բնակչության առողջության, արտադրության անվտանգության և այլ հարցերով հսկողության ազգային մարմինները

«Վ տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սանիտարական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ տեսչական հսկողություն իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ-հակահամաճարակային տեսչությունը: Այն իր գործունեությունն իրականացնում է 16.11.92թ. «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 15.08.02թ. «ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ ու հակահամաճարակային ծառայությունը և դրա համապատասխան մարմինները վերակազմակերպելու և ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կանոնադրության ու կառուցվածքը հաստատելու մասին» որոշման հիման վրա:

Պետական հիգիենիայի և հակահամաճարակային տեսչությունը Հայաստանի բոլոր մարզերում և քաղաքներում ունի, նաև Երևանի բոլոր համայնքներում ունի տարածքային կառույցներ: Տեսուչների ընդհանուր թիվը 249 մարդ է:

Աշխատանքի հիգիենայի հարցերով զբաղվում են պետական հիգիենայի և հակահամաճարակային տեսչության կենտրոնական ապարատի հիգիենայի և ռադիոակտիվ անվտանգության բաժնի, մարզային և քաղաքային կենտրոնների, ինչպես նաև հայկական ատոմային էլեկտրակայանի կենտրոնի բարձրագույն կրթություն ունեցող մասնագետները:

Արտադրական ձեռնարկություններում լաբորատոր ուսումնասիրությունները կատարվում են համաձայն ՀՀ կառավարության 31.10.02թ. «ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ-հակահամաճարակային տեսչության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրական կազմակերպությունների ստեղծման մասին» թիվ 1741 որոշման՝ 10 մարզային և Երևանում գործող 6 «Փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սանիտարահիգիենիկ լաբորատորիաների մասնագետների միջոցով՝ տեսչական մարմինների հայտերի հիման վրա:

Նշված կառույցի գործունեությունն աշխատանքի հիգիենայի ոլորտում ընդգրկում է հետևյալ հարցերը.

- ◆ տեսչական վերահսկում,
- ◆ արտադրական պրոցեսների և արտադրական միջավայրում վտանգավոր ու վնասակար բաղադրիչների հետազոտություն և նրանց քանակական չափորոշիչների սահմանում,
- ◆ սանիտարական նորմերին և կանոններին համապատասխանության գնահատում,
- ◆ աշխատատեղի հիգիենիկ դասակարգում,
- ◆ կանխարգելիչ միջոցառումների մշակում,
- ◆ աշխատողի առողջական վիճակի համապատասխանություն աշխատատեղի պայմաններին (պարբերական բժշկական զննության միջոցով),

- ◆ մասնագիտական հիվանդությունների և թունավորումների դեպքերի հետաքննություն և դրանց վիճակագրական հաշվառում,
- ◆ սոցիալական պաշտպանության միջոցների հիմնավորում,
- ◆ աշխատողների ընդհանուր հիվանդությունների հետազոտում,
- ◆ անձնակազմի հիգիենիկ ուսուցում,
- ◆ մեթոդական և գործնական աջակցություն,
- ◆ ազդեցության վարչական միջոցների կիրառում:

5.2. Աշխատանքի պաշտպանության ոլորտում աշխատող ազգային գիտահետազոտական և նախագծա-կոնստրուկտորական հիմնարկները (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ)

5.2.1. Աշխատանքի պաշտպանության, անվտանգության, աշխատանքի հիգիենայի և բժշկության ոլորտում աշխատող ազգային գիտահետազոտական և նախագծա-կոնստրուկտորական հիմնարկները (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ)

Աշխատանքի անվտանգության և պաշտպանության, հիգիենայի և բժշկության ոլորտում աշխատում են հետևյալ կազմակերպությունները.

- ◆ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ

- ◆ ՀՀ առողջապահության նախարարության «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ

- ◆ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն:

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական հիմնարկն ստեղծվել է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Կենտրոնի գործունեության առարկան տնտեսության ոլորտներում և կազմակերպություններում աշխատանքի անվտանգության և պաշտպանության վիճակի վերլուծությունն ու գնահատումն է, աշխատանքի անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրների հիմնարար և գիտական, կիրառական հետազոտությունների համակարգումն ու իրականացումը, աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտի միջճյուղային, ճյուղային նորմատիվների և հրահանգների մշակումը, վտանգավոր արտադրական օբյեկտներում աշխատանքի պայմանների վիճակի հարցերով ատեստավորման կազմակերպումը, մեթոդական ապահովումն ու անցկացումը, նախագծվող և կառուցվող արտադրական նշանակության օբյեկտների վերաբերյալ փորձագիտական եզրակացության պատրաստումը՝ նրանց աշխատանքի անվտանգության և պաշտպանության պահանջներին համապատասխանության մասով, աշխատանքի

փորձագետների, կազմակերպությունների ղեկավարների և մասնագետների աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերով ուսուցումը և որակավորման բարձրացումը:

5.2.2.Ոչ պետական գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական հիմնարկները (ինստիտուտներ, կենտրոններ, լաբորատորիաներ)

ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունն իր կառույցների միջոցով աշխատանքի պաշտպանության ոլորտում ակտիվ վերլուծական, տեղեկատվական և քարոզչական գործունեություն է իրականացնում: Այդ միջոցառումների կազմակերպման և անցկացման հիմնական աշխատանքները կատարում են «Անկախ վերլուծության, արդյունավետության և մրցունակության կենտրոն»-ը և «Հայ կոնսալտ» խորհրդատվական հիմնադրամը: Նրանք ձեռնարկություններին մատուցում են խորհրդատվական ծառայություններ, այդ թվում՝ նաև աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում: «Հայ կոնսալտ» հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվել է ԱՄԿ աշխատանքի պաշտպանության կառավարման 2001 համակարգի ուսուցման սեմինարների շարք: Այդ սեմինարները վարել են Կանադայից, Բելգիայից հրավիրված, ինչպես նաև ԱՄԿ փորձագետները: Սեմինարներին մասնակցել են նախարարությունների և գերատեսչությունների, արհմիությունների, փոքր և մեծ բիզնեսի ներկայացուցիչներ: «Հայ կոնսալտ» հիմնադրամն «էլիտ գրուպ» ՓԲԸ-ում և նրա կազմակերպություններում 2007թ. հունիսին ներդրել է OSHAS 18001 չափորոշիչը, ինչի համար տրվել է հավաստագիր:

5.2.3.Աշխատանքի պաշտպանության ոչ ուսուցողական ծառայություններ մատուցող կենտրոններ (աշխատանքի հիգիենայի ծառայություններ)

Չկան:

5.2.4.Մասնագիտական ախտորոշման կենտրոններ

Նախկինում Հայաստանի Հանրապետությունում գոյություն ուներ մասնագիտական ախտորոշման ինստիտուտ՝ իր մասնագիտացված հիվանդանոցով:

Այժմ մասնագիտական հիվանդացման պրոցեսի հաստատումն իրականացվում է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնի հիգիենայի և մասնագիտական հիվանդացումների գիտահետազոտական ինստիտուտում, հետևյալ ձևով:

Աշխատողը դիմում է համաբուժարան (պոլիկլինիկա), հետազոտվում է, լրացվում է 88 ձևը և ուղարկվում է հիգիենայի և մասնագիտական հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտ, որտեղ

անհրաժեշտության դեպքում նա անցնում է ստացիոնար հետազոտություն: Բացի 88 ձևից, կցվում են նաև աշխատանքի պայմանների հիգիենիկ բնութագիրը, մասնագիտական երթուղին, աշխատանքային բնութագիրն այն նյութերի նշմամբ, որոնց հետ շփվել է աշխատողը: Երբեմն համաբուժարանից պահանջվում է աշխատողի ամբուլատոր քարտը: Ինստիտուտը ձևակերպում է իր եզրակացությունը և ուղարկում բժշկական սոցիալական փորձագիտական գործակալություն: Ներկայացված փաստաթղթերի հիման վրա հաստատվում է մասնագիտական աշխատունակության կորստի տոկոսը և հիվանդի հաշմանդամության խումբը:

5.3. Արտադրության անվտանգության և աշխատանքի պաշտպանության ոլորտում մասնագիտական ուսուցումը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը և տեղեկատվա-բացատրական աշխատանքը

5.3.1. Բարձրագույն մասնագիտական և հետբուհական (ասպիրանտուրա) կրթության ծրագրերը

Հանրապետությունում հայկական պետական գյուղատնտեսական համալսարանի հիդրոմելիորացիայի ֆակուլտետում կա կենսագործունեության անվտանգության և արտակարգ իրավիճակների ամբիոն: Ամբիոնը գործում է արդեն չորս տարի: ամեն տարի այն ավարտում են 20-25 ճարտարագետներ «Կենսագործունեության անվտանգություն» մասնագիտությամբ: Գործում է մագիստրատուրա, ասպիրանտուրա այդ մասնագիտացմամբ:

Հայկական ճարտարագիտական պետական համալսարանում գործում է «Կենսագործունեության անվտանգությունը» ամբիոնը, որի գիտաաշխատողներն զբաղվում են հետևյալ գիտական ուղղություններով.

- ◆ պայթար աղմուկի հետ
- ◆ հակահրդեհային անվտանգություն
- ◆ աշխատատեղերի զագահագեցվածության հետազոտություններ
- ◆ քաղաքներում աղմուկի քչացման խնդիր:

Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում ուսումնասիրում են աշխատանքի պաշտպանություն առարկան: ԲՈՒՀ-երում դիպլոմային աշխատանքներում աշխատանքի պաշտպանության հարցերին հատուկ բաժին է տրամադրվում:

5.3.2. Ռեսուրսային հաստատությունների կողմից իրագործվող լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրեր

Չկան:

5.3.3. Գործատուների կամ աշխատողների միավորումների կողմից կազմակերպվող ուսուցում

ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը (ՀԱԳ(Գ)Մ) աշխատանքի պաշտպանության ոլորտն իր հասարակական

գործունեության մեջ համարում է գերակա ուղղություններից մեկը, որը պետք է լինի յուրաքանչյուր գործատուի աշխատանքի կարևորագույն ուղղություններից:

<ԱԳ(Գ)Մ–ի կողմից 2006-2007թ.թ. ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մոտ 20 միջոցառումներ, (ուսուցումներ, սեմինարներ, գործնական պարապմունքներ և այլն) աշխատանքի անվտանգության և պաշտպանության համար պատասխանատու աշխատողների և գործատուների համար: ԱՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ենթատարածաշրջանային գրասենյակի հետ համատեղ իրականացվել է սեմինարների շարք: Առաջին փուլում, 2007թ. սեպտեմբերին, անցկացվել է սեմինար «Աշխատանքի պաշտպանություն, ԱՄԿ աշխատանքի պաշտպանության կառավարման 2001/ԴՕՇ 12.0.230-2007 համակարգ ձեռնարկը և դրա՝ ձեռնարկություններում գործնական ներդրման հարցեր»: Սեմինարը վարել է ԱՄԿ աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերով տարածաշրջանային համակարգողը:

Երկրորդ փուլն իրականացվեց 2007թ. նոյեմբերին՝ «Ռիսկերի գնահատումը և աշխատանքի անվտանգության պաշտպանության պահանջները» թեմայով սեմինարի միջոցով: Ուսուցման շարք վարեցին «Հոլանդիայի գործատուների հետ համագործակցության ծրագրեր»-ի (Dutch employers Cooperation program) ներկայացուցիչները - Thieu Korten–ի գործադիր տնօրենը և Jean Marie Standaert–ի հատուկ խորհրդակցանը: Ուսուցումները «Անվտանգություն, առողջություն և աշխատանքի պայմաններ», «Ինչպես աշխատանքի անվտանգության և պաշտպանության խորհրդատվության համակարգը ներդնել գործատուների կազմակերպություններում» թեմաներով էին:

Ուսուցման 25 մասնակիցներ ստացան համապատասխան հավաստագրեր, ինչը նրանց տվյալ հարցերով դասավանդման իրավունք է տալիս:

Սեմինարների երրորդ փուլը տեղի ունեցավ 2007թ. դեկտեմբերին, «Աշխատանքի անվտանգությունը, պաշտպանությունը և փոքր ձեռնարկություններում աշխատանքային միջավայրը» թեմայով սեմինարի միջոցով, «Փոքր ձեռնարկություններում աշխատանքի կատարելագործում» (WISE) ծրագրով:

<ԱԳ(Գ)Մ–ի կազմակերպած բոլոր վերոհիշյալ միջոցառումներին մասնակցել են սոցիալական գործընկերները:

Կազմակերպվել են միության անդամ գործատուների հանդիպումներ ԲՈՒՀ-երի ուսանողների հետ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են ձեռնարկությունների ներքին կանոններին, աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջներին, ինչպես նաև աշխատանքի հիգիենայի և անվտանգության հարցերին, տեղեկատվություն են ստացել աշխատանքի բարենպաստ պայմաններ ապահովելու մասին:

Ուսանողների համար ԲՈՒՀ-երում և քոլեջներում անցկացվել են սեմինարներ, որոնցում նրանց ծանոթացրել են գործող աշխատանքային օրենսդրության, նրա առանձին բաժինների, գործատուների պահանջների, աշխատողների իրավունքների և այլ հարցերի հետ: Սեմինարներին ներկա են գտնվել նաև դասախոսներ և ղեկավարներ:

Անկախ վերլուծության, արդյունավետության և մրցունակության կենտրոնի կողմից 2006թ. 600 օրինակով հրատարակվել է գործատուներին ուղղված

«Արտադրողականություն և մրցունակություն» ձեռնարկը, որում աշխատանքի պաշտպանության հարցերին առանձին գլուխ է հատկացվել: Հաշվի առնելով նման գրականության մեծ պահանջարկը, 2007թ ձեռնարկը համալրվել է նոր նյութերով, վերահրատարակվել 1500 օրինակով և տարածվել գործատուների մեջ:

5.3.4. Գործատուների կողմից կազմակերպվող աշխատողների ուսուցում

Աշխատանքային օրենսգրքի 254 հոդվածի համաձայն գործատուն աշխատողից չի կարող պահանջել աշխատանքային պարտականությունների կատարում, եթե նա չի անցել ուսուցում և հրահանգավորում աշխատանքի անվտանգության հարցերով: Գործատուն պետք է ապահովի, որպեսզի իր կազմակերպություն գործուղված աշխատողը նախքան աշխատանքային պարտականությունների կատարմանն անցնելը ծանոթանա կազմակերպությունում գոյություն ունեցող հնարավոր ռիսկի բաղադրիչների հետ և ստանա կոնկրետ աշխատատեղում աշխատանքի անվտանգության հրահանգավորում: Ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության ուսուցումը կազմակերպվում է **ГОСТ 12.0.004–90**-ի համաձայն, քանի որ հանրապետությունում դեռ գոյություն չունեն աշխատանքի անվտանգ մեթոդների ուսուցման այլ նորմատիվ ակտեր:

Ըստ բնութագրի և անցկացման ժամանակի հրահանգավորումները լինում են.

- ◆ սկզբնական՝ աշխատանքի ընդունելիս;
- ◆ առաջնային՝ տվյալ աշխատողի մասնագիտությամբ կոնկրետ աշխատատեղում աշխատանքի անվտանգ մեթոդների հրահանգով;
- ◆ կրկնվող՝ 6 ամիսը մեկ, իսկ արտադրության վտանգավորությունից կախված՝ երբեմն 3 ամիսը մեկ ;
- ◆ արտապլանային՝ տեխնոլոգիաներում կամ հրահանգներում փոփոխությունների դեպքում;
- ◆ վերահսկող մարմինների պահանջով կամ դժբախտ դեպքերից հետո;
- ◆ աշխատողների կողմից անվտանգության տեխնիկայի պահանջների խախտման դեպքում:

Տարին մեկ անգամ անկացվում է աշխատողների գիտելիքների ստուգում, 3 կամ 5 տարին մեկ՝ ինժեներա-տեխնիկական աշխատողների:

Ներկայումս հրահանգավորման, ուսուցման և անձնակազմի գիտելիքների ստուգման նոր կարգ է պատրաստվում:

ՀԱԳ(Գ)Մ-ն գործատուների հետ համատեղ կազմակերպել է մի շարք սեմինարներ «ՀՀ աշխատանքային օրենսդրության» վերաբերյալ: Մասնավորապես ուսուցումներ և քննարկումներ են կազմակերպվել «Աշխատանքային հարաբերություններ», «Աշխատանքային պայմանագիր» թեմաներով, աշխատանքի անվտանգության, պաշտպանության հարցերով և այլն: Սեմինարներին մասնակցել են աշխատանքի պաշտպանության ծառայությունների և կադրերի բաժինների աշխատակիցները: Քննարկումների ընթացքում բացահայտվել են «ՀՀ աշխատանքային օրենսդրության» ուժեղ և թույլ կողմերը, ինչը հնարավորություն տվեց 2007թ. նոյեմբերին ՀՀ աշխատանքային օրենսդրության վերաբերյալ մշակել հանձնարարականներ և

դիտողություններ, որոնք ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Սեպտեմբերյան ուսուցումների ժամանակ մասնակիցներն այցելեցին «Հայաստանի մոլիբդենային կոմբինատ», որի անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ներկայացվեցին աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերը ձեռնարկությունում: Այդ տեղեկատվությունը հնարավորություն տվեց բացահայտել թերություններն ու նորմերից շեղումները և կատարել ռիսկերի գնահատում:

ԱՄԿ-ի հետ, որպես համագործակցության նոր ուղղություն, նախատեսվում է իրականացնել «Աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգային մոտեցումը և աշխատանքի ժամանակակից պայմանները» ծրագիրը:

Բարձր վտանգավորությամբ աշխատանք կատարող աշխատողների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի ուսուցումը կատարվում է ուսումնական կոմբինատներում և կենտրոններում:

1. Հայրուսագազարդ-ին կից ինժեներա-տեխնիկական կենտրոն - զբաղվում է կադրերի պատրաստմամբ և վերապատրաստմամբ: Ուսուցման 50-ժամյա ծրագրով ուսուցանվում է գազային տնտեսությունում անվտանգության կանոնների պահպանում, աշխատանքների անվտանգ կատարում, ուսուցում է կատարվում «Աշխատանքի պաշտպանությունը զոդման կարերի ռենդգենոսկոպիայի ժամանակ», «Էլեկտրա-քիմիական կոռոզիաներից զազախողովակների պաշտպանությունը», «Գազախողովակների մեկուսացումը» և այլ թեմաներով: Տարեկան ուսուցանվում են Հայրուսագազարդի 500-700 և 250-300 կողմնակի կազմակերպությունների՝ գազային տնտեսության համար պատասխանատու, աշխատողներ:

2. Շինարարական ուսումնական կոմբինատն զբաղվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբակային ուսուցմամբ: Պատրաստում են մեխանիզատորներ, մոնտաժողներ, տարբեր մասնագիտությունների շինարարներ: Ծրագիրը նախատեսված է 60 ժամի համար: Տարեկան ուսուցում է անցնում 300 մարդ: Դասընթացի ավարտից հետո տեղի է ունենում գիտելիքների ստուգում և վկայականների հանձնում, որոնք իրավունք են տալիս աշխատել շինարարությունում համապատասխան մասնագիտությամբ:

3. Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնում ստեղծվել է ուսումնական ծառայություն, որտեղ պատրաստվում են կատարվող աշխատանքների անվտանգության համար պատասխանատու ինժեներա-տեխնիկական կադրեր և վտանգավոր արտադրական օբյեկտներում անվտանգության տեխնիկայի մասնագետներ:

4. Ճգնաժամային կառավարման ազգային ակադեմիան պատրաստում է արտակարգ իրավիճակներում կառավարման մասնագետներ, փրկարարներ և հրշեջներ:

5. Ջանգեզուրի պղնձ-մոլիբդենային կոմբինատի ուսումնական կենտրոնում տարեկան պատրաստվում և վերապատրաստվում է 1500 մարդ:

5.3.5. Տեղեկատվա-բացատրական աշխատանքով զբաղվող կառույցներ

Հանրապետությունում ներկայումս այդպիսի կառույցներ գոյություն չունեն: 2008թ. նախատեսված է ստեղծել աշխատանքի պաշտպանության ազգային տեղեկատվական կենտրոն:

Այդ կենտրոնը պետք է շահառուներին՝ գործատուներին, արհմիություններին, աշխատողներին, տրամադրի աշխատանքի հիգիենայի և անվտանգության ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ակտիվորեն աշխատի աշխատանքի պետական տեսուչների, կազմակերպությունների ու արհմիությունների աշխատանքի պաշտպանության մասնագետների ուսուցման և որակավորման բարձրացման ուղղությամբ:

5.4. Աշխատանքի պաշտպանության տարբեր ասպեկտների հետ կապված մասնագիտացված գիտական, տեխնիկական և բժշկական հաստատություններ

5.4.1. Ստանդարտացման մարմիններ

09.11.99թ. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքն հաստատում է Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման հարցերով գործունեության իրավական հիմքերը և նրա մասնակիցների որակավորման անհրաժեշտ մակարդակը, ինչպես նաև կանոնակարգում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և ընդունման սկզբունքները: Ստանդարտացման նպատակն է ապահովել.

- ա) արտադրության, աշխատանքի, շրջակա միջավայրի պահպանության ծառայությունների, կյանքի, առողջության, ունեցվածքի անվտանգությունը;
- բ) ապրանքների, տեխնիկական և տեղեկատվական համապատասխանությունը, փոխարինումը,
- գ) ապրանքների, ծառայությունների, աշխատանքի որակի բարձրացումը,
- դ) չափման միասնությունը,
- ե) ռեսուրսների խնայողությունը,
- զ) արտակարգ իրավիճակներում կառուցվածքների ու սարքավորումների անվտանգությունն ու հուսալիությունը,
- է) առևտրում տեխնիկական անջրպետների վերացումը,
- ը) պետության պաշտպանության և մոբիլիզացիոն պատրաստության համար անհրաժեշտ պայմանները:

2. Ստանդարտացման օբյեկտներ են հանդիսանում ապրանքները, աշխատանքը (նաև գործընթացը) և ծառայությունը:

Ստանդարտացման գործընթացի մասնակիցները

1. Ստանդարտացման գործընթացի մասնակիցներ հանդիսանում են ստանդարտացման ազգային մարմինը, այլ պետական մարմիններ, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

2. Այլ պետական մարմիններն ստանդարտացման գործընթացին մասնակցում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
3. Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերն ստանդարտացման գործընթացում գործում են «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

Հանրապետությունում գործող ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը և դրանց նկատմամբ պահանջները

1. ՀՀ-ում գործող ստանդարտացման նորմատիվ փաստաթղթեր են հանդիսանում.
 - ա) տեխնիկական կանոնակարգերը,
 - բ) ազգային չափորոշիչները,
 - գ) տեխնիկական պայմանները,
 - դ) տեխնիկա-տնտեսական տեղեկատվության դասակարգիչները (հետագայում՝ դասակարգիչները),
 - ե) կազմակերպության չափորոշիչները:

Ստանդարտացման ոլորտում պետական կառավարումը

1. ՀՀ-ում ստանդարտացման ոլորտում պետական կառավարումն իրականացնում է ստանդարտացման ազգային մարմինն ի դեմս ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ստանդարտացման ազգային ինստիտուտի:
2. Ստանդարտացման ազգային մարմինը.
 - ա) իրականացնում է ստանդարտացման ոլորտում պետական քաղաքականությունը,
 - բ) ընդունում է ազգային չափորոշիչները և դասակարգիչները,
 - գ) հաստատում է կազմակերպչա-մեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ստանդարտացման աշխատանքների կատարման արարողակարգերը, սահմանում է ստանդարտացման մասնակիցների փոխհարաբերությունները,
 - դ) հաստատում է ՀՀ-ում միջազգային, տարածաշրջանային, միջպետական, այլ պետությունների ազգային չափորոշիչների ընդունման կարգը,
 - ե) մասնակցում է միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտացման աշխատանքներին,
 - զ) կազմակերպում է ստանդարտացման ոլորտի կադրերի մասնագիտացումը և վերապատրաստումը,
 - է) ապահովում է ստանդարտացման ոլորտի պաշտոնական տեղեկատվությունը և նրա տրամադրումը միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով,
 - ը) ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,
 - թ) իրականացնում է ազգային չափորոշիչների և տեխնիկական պայմանների պետական գրանցումը:

5.4.2. Ապահովագրության հարցերով մարմիններ

«Վառավարությունում քննարկվում է «Մասնագիտական հիվանդություններից և դժբախտ դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն օրինականորեն կանրագրի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հետևանքով առաջացող պարտավորությունների գծով ապահովագրության համակարգի կազմակերպման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները:

Ստեղծվել է պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հարցերով նորմատիվ-իրավական ակտերի բազայի մշակման աշխատանքային խումբ:

5.4.3. Վտանգները և ռիսկերը գնահատող մասնագիտացված մարմիններ

Վտանգավոր արդյունաբերական օբյեկտներում վտանգներն ու ռիսկերը գնահատող մասնագիտացված մարմինն է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը:

5.4.4. Արտակարգ իրավիճակներում փրկարար գործողությունների պատրաստության մարմինները

Արտակարգ իրավիճակներում փրկարար գործողությունների նախապատրաստման հիմնական մարմինը ՀՀ տարածքային կառավարման նախարարության փրկարար ծառայությունն է: Փրկարար ծառայության գործունեությունը կանոնավորվում է ՀՀ սահմանադրությամբ, 2005թ. հուլիսի 8-ի «ՀՀ փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով ու նորմատիվ ակտերով: Փրկարար ծառայությունը պետական մարմին է, որն իրականացնում է արտակարգ իրադրությունների նախագգուշացում, նրանց հետևանքների թուլացում և վերացում: Այն արտակարգ իրավիճակներում իրականացնում է քաղաքացիական պաշտպանության գործողություններ, ռազմական դրության դեպքում պաշտպանում է ժողովրդական տնտեսության օբյեկտները, տարածքները և քաղաքացիական բնակչությանը, նաև իրականացնում է վթարա-փրկարարական, որոնողա-փրկարարական, հետաձգման ոչ ենթակա վերականգնողական աշխատանքներ, հրդեհների մարում և այլն: Փրկարար ծառայության կառուցվածքն ու թվաքանակը հաստատում է ՀՀ կառավարությունը: Այդ կառուցվածքում են սեյսմիկ ծառայությունը, քաղաքացիական պաշտպանությունը, հակահրդեհային ծառայությունը, ձգնաժամային կառավարման պետական ակադեմիան, որը նաև պատրաստում է արտակարգ իրավիճակների կառավարման մասնագետներ, տնտեսագետներ, հրշեջներ, նախագգուշացման և արագ արձագանքման ծառայությունների ձարտարագետներ:

Փրկարար ծառայությունը պայմանագրեր է կնքում քիմիական ձեռնարկությունների և վտանգավոր արդյունաբերական օբյեկտների հետ, անցկացնում է նրանց անձնագրանցումն ու մոնիտորինգը: Անհրաժեշտության դեպքում նախապատրաստում է ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագգծերը:

Փրկարար ծառայության հաշվետու-տեղեկատվության համաձայն 2006թ Հայաստանում հաշվառվել է 7138 արտակարգ իրավիճակի դեպք: Դրանցից 4566-ը (63,9%)՝ տեխնածին, 247-ը (3,5%)՝ տարերային, 2325-ը (32,6%)՝ սոցիալ-կենցաղային: Տուժել է 5058 մարդ, նրանցից 481-ը մահացել է, 4557-ը վիրավորվել:

Փրկարար ծառայությունը սերտորեն կապված է գործատուների հետ, իրականացնում է ուսուցումներ: 2006թ. պատրաստվել և ուսուցանվել են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով 1721 ղեկավարներ և մասնագետներ:

5.5. Աշխատանքի պաշտպանության ոլորտի աշխատողներ

Հանրապետությունում աշխատանքի պաշտպանության ոլորտի աշխատողների թվաքանակը կազմում է 4100 մարդ:

5.5.1. Ազգային մակարդակի պետական մարմինների աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու աշխատակիցներ

Պետական մարմինների աշխատանքի պաշտպանության ոլորտի պատասխանատու աշխատակիցների թիվը 1510 մարդ է:

5.5.2. Տարածքային կառավարման մարմինների աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու աշխատակիցներ

Տարածքային մակարդակի պետական մարմինների աշխատանքի պաշտպանության ոլորտի պատասխանատու աշխատակիցների թիվը 1280 մարդ է:

5.5.3. Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու աշխատակիցներ

Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի պաշտպանության համար պատասխանատու աշխատակիցների թիվը 180 մարդ է:

5.5.4. Գործատուների՝ աշխատանքի պաշտպանության ծառայությունների աշխատակիցներ

Հայաստանում 2200-ից ավելի ձեռնարկություններ ունեն կոլեկտիվ պայմանագրեր, որոնցում գործատուների և աշխատողների ներկայացուցիչները համատեղ որոշում են նաև աշխատանքի պաշտպանության հարցերը: Հիմնականում խոշոր և միջին ձեռնարկությունները, նաև շինարարական կազմակերպություններն ունեն աշխատանքի պաշտպանության ծառայություններ, որոնցից շատերի կարգավիճակն հավասարեցված է հիմնական արտադրական ծառայություններին, և ենթարկվում են անմիջականորեն կազմակերպության ղեկավարին (սեփականատիրոջը): Մի շարք ձեռնարկություններում («Հայաստանի մոլիբդենային արդյունաբերություն» ՓԲԸ, «Հայաստանի կոոպերատիվ ծրագրեր» ՓԲԸ, «Ավանի աղահանքային կոմբինատ» ՓԲԸ, «Նաիրիտ» ՓԲԸ, «Ուսսալկրմենալ» ՓԲԸ, «Պլաստիկ» ԲԲԸ «Երևանի

կոնյակի գործարան» ՓԲԸ, «Էլեկտրասարք» ԲԲԸ, «Շեն կոնցեռն» ՓԲԸ, «Հայ կոնսալտ» հիմնադրամ և ուրիշներ) աշխատանքի պաշտպանության կառավարումն իրականացվում է աշխատանքի պայմանների բարելավման կոմպլեքս պլանների համաձայն, որոնք մշակվել են աշխատանքի պաշտպանության ոլորտի օրենքների և այլ նորմատիվ-իրավական ակտերի պահանջների հիման վրա: Այդ կազմակերպությունների ղեկավարների կողմից աշխատատեղերի սանիտարա-կենցաղային պայմանների բարելավման միջոցներ են ձեռնարկվում, փնտրվում են աշխատանքի պաշտպանության լրացուցիչ միջոցներ, այդ թվում՝ անհատական պաշտպանության միջոցներ, հատուկ սնունդ և այլն: Իրագործվում են սոցիալական բնույթի տարբեր կորպորատիվ ծրագրեր: Օրինակ. «Երևանի գարեջրի գործարան» ՓԲԸ-ն վճարում է իր աշխատողների երեխաների ուսուցումը ԲՈՒՀ-երում, «Ապավեն», «Էլեկտրասարք» ԲԲԸ-ն, «Հայ կոնսալտ» հիմնադրամն իրենց աշխատողներին անվճար սնունդ են տրամադրում: Շատ կազմակերպություններ վճարում են տրանսպորտի, բժշկական ծառայությունների համար: Միաժամանակ, փոքր և միջին ձեռնարկություններում, որպես կանոն, աշխատանքի պաշտպանության ծառայությունները կամ բացակայում են, կամ թերի են: Հիմնականում այդ գործառույթները կատարում է կադրերի բաժնի աշխատակիցը, որն համատեղում է անվտանգության ծառայության գործառույթները և վարում է անհրաժեշտ սեմինարներն ու հրահանգավորումները:

6. ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԺՔԱՆՏ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԴԻՆԱՄԻԿԱՆ

6.1. Վնասվածքների և հիվանդությունների դեպքերը որպես արտադրական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների դեպքեր , որակավորման հիմունքները

Դժբախտ դեպքերի հաշվառման և ծառայողական քննությունների անցկացման կարգը հաստատված է ՀՀ կառավարության 2006թ մարտի 23-ի թիվ 458 որոշմամբ և տարածվում է բոլոր դեպքերի վրա, որ տեղի են ունեցել մշտական, ժամանակավոր, սեզոնային, արտահաստիքային և համատեղությամբ աշխատողների, ինչպես նաև արտադրական պրակտիկա անցնող աշակերտների և ուսանողների հետ: Հաշվառման և ծառայողական քննության ենթակա են այն դժբախտ դեպքերը, որոնք տեղի են ունեցել աշխատողի հետ նրա աշխատանքային պարտականությունները կատարելիս ինչպես ձեռնարկության տարածքում, այնպես էլ տարածքից դուրս, հերթափոխից առաջ և հերթափոխից հետո՝ գործիքներն ու սարքավորումները կարգի բերելու համար անհրաժեշտ ժամանակահատվածի ընթացքում, գործուղման կամ ընդմիջման ժամանակ, ձեռնարկության և քաղաքային տրանսպորտում իր պարտականությունները կատարելու անհրաժեշտության դեպքում: Ծառայողական քննություն կատարելու համար ստեղծվում է հանձնաժողով երեքից ոչ պակաս անդամների թվով, գործատուի և աշխատողի առողջության պաշտպանության ու անվտանգության ապահովման ծառայության ներկայացուցիչներից: Հանձնաժողովը երեք օրվա ընթացքում ծառայողական քննություն է կատարում և ըստ արդյունքների լրացնում է թիվ 1 ձևը: Այդպիսի դժբախտ պատահարները մատչանում հաշվառվում են թիվ 2 ձևով:

Ծանր, խմբային կամ մահվան ելքով պատահարների դեպքում ստեղծվում է հանձնաժողով՝ գործատուի, տուժածի և աշխատողների առողջության պաշտպանության ու անվտանգության ապահովման ծառայության ներկայացուցիչներից: Հանձնաժողովը 15 օրվա ընթացքում քննություն է կատարում և 24 ժամվա ընթացքում լրացնում է թիվ 4 ձևը: Խմբային դժբախտ պատահարների դեպքում յուրաքանչյուր աշխատողի համար առանձին ակտ է կազմվում: Հետաքննության ավարտից հետո 3 օրվա ընթացքում նյութերն ուղարկվում են աշխատանքի պետական տեսչություն և ապահովագրական ընկերություն, եթե տուժածն ապահովագրված է: Հինգ և ավելի մարդկանց մահվան դեպքում հանձնաժողովն ստեղծվում է ՀՀ կառավարության կողմից:

Անհրաժեշտ է նշել, որ քննությունները գործնականում իրականացվում են միակողմանի՝ գործատուի կողմից, առանց ձեռնարկության արհմիության և աշխատանքի տեսչության ներկայացուցիչների մասնակցության: Այդ պատճառով հաճախ հանձնաժողովը դժբախտ պատահարի պատասխանատու համարում է հենց տուժածներին, ինչը, բնականաբար, առաջացնում է տուժածների բողոքը, քանի որ տուժածի մեղավորության աստիճանից է կախված փոխհատուցման չափը:

«Հ կառավարության 2006թ. մարտի 23-ի «Մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) հաշվառման և ծառայողական քննության մասին» թիվ 458 որոշման համաձայն սուր մասնագիտական հիվանդության (թունավորման) պատահարի դեպքում տվյալ պատահարը բացահայտող բժշկական հիմնարկությունը 6 ժամվա ընթացքում այդ մասին հեռախոսով հայտնում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոն և 24 ժամվա ընթացքում ուղարկում է մասնագիտական հիվանդության մասին տեղեկանք թիվ 1 ձևով: Երկու կամ ավելի տուժածների դեպքում յուրաքանչյուր աշխատողի համար ուղարկվում է առանձին տեղեկանք: Մասնագիտական հիվանդության փաստի (ախտորոշում) հաստատման կամ փոփոխության դեպքում 24 ժամվա ընթացքում տեսչության տարածքային կենտրոն է ուղարկվում տեղեկանք ձև թիվ 2-ը: Խրոնիկական մասնագիտական հիվանդության փաստի հաստատման դեպքում 3 օրվա ընթացքում, մասնագիտական հիվանդությունների հաստատված ցուցակի հիման վրա տեսչության տարածքային կենտրոն է ուղարկվում խրոնիկական մասնագիտական հիվանդության փաստի մասին տեղեկանք ձև թիվ 3-ը: Խրոնիկական մասնագիտական հիվանդության վերջնական հաստատումը կատարվում է աշխատատեղում աշխատանքի հիգիենիկ պայմանների մասին արտադրական բնութագրի հիման վրա: Մասնագիտական հիվանդության յուրաքանչյուր դեպք ենթակա է ծառայողական քննության: Քննությունը կատարում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովը, որը կազմվում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչության, ձեռնարկության արհմիության, գործատուի, և անհրաժեշտության դեպքում, այլ հետաքրքրված կազմակերպությունների ներկայացուցիչներից: Հանձնաժողովն անցնում է իր պարտականությունների կատարմանը տեղեկանքն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Եթե սուր մասնագիտական հիվանդացման դեպքն ըստ ժամանակի համընկնում է արտադրական դժբախտ պատահարի հետ, ապա դժբախտ պատահարն հետաքննվում է արտադրական դժբախտ պատահարների ծառայողական քննության կարգի համաձայն: Խրոնիկ մասնագիտական հիվանդության ծառայողական հետաքննությունը կատարվում է տեղեկանքն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Խրոնիկ մասնագիտական հիվանդության ծառայողական քննության արդյունքները ձևակերպվում են ձև թիվ 4 ակտով: Ակտը մեկական օրինակով տրվում է հանձնաժողովի անդամներին, տուժածներին, անհրաժեշտության դեպքում, սոցիալական ապահովագրության մարմիններին: Առողջապահական կազմակերպությունները վարում են սուր մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) վիճակագրական հաշվառում:

6.2. Արտադրական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների հիմնական ցուցանիշները

Հանրապետությունում աշխատանքի պաշտպանության ոլորտում աշխատանքների կազմակերպվածությունը ոչ լրիվ չափով է նպաստում արտադրական վնասվածքների դեպքերի նվազեցմանը (տես աղյուսակը):

Արտադրական դժբախտ պատահարների հիմնական պատճառները, առաջվա պես, շարունակում են մնալ աշխատանքի անբավարար կազմակերպումը, աշխատանքի անվտանգ մեթոդների անբավարար ուսուցումը, տեխնոլոգիական քարտեզների բացակայությունը, տրանսպորտային միջոցների, հաստոցների, սարքավորումների շահագործման ժամանակ անվտանգության կանոնների խախտումը և այլն:

ՀՀ վիճակագրական ծառայության տվյալներով, որոնք հիմնված են ներկայացված հաշվետվությունների վրա, արտադրական դժբախտ պատահարների դինամիկան 2002-2006թ.թ. բերված է հետևյալ աղյուսակում:

	2002	2003	2004	2005	2006
տուժածների քանակը	110	95	85	75	100
այդ թվում՝ կանայք	2	4	7	9	6
մահվան ելքերի քանակը	15	27	22	17	17
այդ թվում՝ կանայք	2	1	4	1	1
ԿԿ	0,7	0,8	0,8	0,7	0,9
Անաշխատունակության մարդ-օրերի թիվը	3800	4200	3500	2300	3000
ԿՏ	34,5	44,2	41,1	30,6	30
աշխատանքի գնալիս	2	4	3	1	2
տուն գնալիս	4	3	3	2	2

Ինչպես երևում է աղյուսակից, հանրապետության կազմակերպություններում տուժածների ընդհանուր թիվը 2006թ. կազմել է 100 մարդ՝ 2002թ. 75 մարդու դիմաց: Աճը կազմում է 25%:

Աշխատողների մոտ մասնագիտական հիվանդությունների առաջացման հիմնական պատճառները շարունակում են մնալ աշխատանքի պայմանների անբավարար վիճակը, հանքերում օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումների անկատարությունից առաջացող բարձր աղմուկը, աշխատողների անհատական պաշտպանության միջոցների, հատուկ զգեստ, կոշիկ և այլն, բացակայությունը կամ անբավարար ապահովումը :

6.3. Արտադրական վնասվածքների և մասնագիտական հիվանդությունների հաշվառման հիմնական ձևերը

Արտադրական վնասվածքների դեպքերի հաշվետվության հիմնական ձևը պետական վիճակագրական հաշվետվական թիվ 7_{վս} ձևն է, որն հաստատվել է պետական վիճակագրական խորհրդի կողմից 2002թ. օգոստոսի 12-ի թիվ

170 որոշումով: Մասնագիտական հիվանդության մասին հաշվետվությունը ներկայացվում է թիվ 7 ձևով (մասնագիտական հիվանդություն):

6.4. Վիճակագրական տեղեկատվության հավաքման հիմնական ձևերը

Ամեն տարի մինչև հունվարի 25-ն իրավաբանական անձանց, ձեռնարկությունների, անհատ ձեռնարկատերերի կողմից թիվ 7_{վս.} ձևով հաշվետվություն է ուղարկվում վիճակագրական ծառայության տարածքային մարմիններին, որոնք ներկայացված հաշվետվությունների ամփոփ արդյունքները, մինչև փետրվարի 15-ն, ուղարկում են ՀՀ վիճակագրական ծառայություն:

ՀՀ վիճակագրական ծառայություն թիվ 7 ձևով, «մասնագիտական հիվանդություններ» հաշվետվություն է ներկայացվում բժշկական սոցիալական փորձագիտական գործակալության կողմից:

6.5. Հաշվառված մահվան ելքով արտադրական դժբախտ պատահարների թիվը

Տես 6.2 –ի աղյուսակը:

6.6. Հաշվառված արտադրական վնասվածքների թիվը

2006թ. դիտվել է արտադրական վնասվածքների թվի աճ 25%ով, իսկ անաշխատունակության մարդ-օրերի թիվն աճել է 15%ով: 2006թ. վերջին աշխատանքային վնասվածքներից 200 մարդ դարձել է առաջին կարգի հաշմանդամ, որից 36-ը՝ կանայք, երկրորդ կարգի՝ 1099 մարդ (219 կին) , իսկ երրորդ կարգի՝ 1703 մարդ (247 կին) :

Աճում է մահվան ելքով արտադրական դժբախտ պատահարների թիվը շինարարական, էներգետիկայի, մետաղամշակման ձեռնարկություններում:

6.7. Գրանցված մասնագիտական հիվանդությունների դեպքերի թիվը

Տես 6.2-ի աղյուսակը:

6.8. Աշխատանքի անբարենպաստ պայմաններով աշխատատեղերում աշխատողների թիվը

Աշխատանքի անբարենպաստ պայմաններով աշխատատեղերում աշխատողների թիվը ՀՀ վիճակագրական ծառայությունը ներկայացնում է հաշվետվական 1-ա. «աշխատանքի պայմաններ» ձևով: Վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատողների՝ ըստ տնտեսության ճյուղերի բաշխման վիճակագրությունը տրված է հետևյալ աղյուսակում:

Ճյուղում զբաղվածների ընդհանուր թվի %

	ընդամենը	1000 մարդ կազմակերպություններում			
		արդյունաբերություն	շինարարություն	տրանսպորտ	կապ
սանիտարա-հիգիենիկ նորմերին չհամապատասխանող պայմաններում աշխատողներ					
2002	3,6	3,2	0,04	4,8	11,1
2003	3,4	4,5	0,2	3,8	-
2004	1,8	3,7	-	4,6	-
2005	1,0	3,9	0,3	4,3	-
ծանր ֆիզիկական աշխատանքով զբաղվածներ					
2002	0,3	0,2	0,5	0,5	-
2003	4,9	6,6	2,4	1,4	-
2004	0,6	0,5	7,1	1,6	-
2005	0,3	1,1	1,7	1,1	-
անվտանգության պահանջներին չհամապատասխանող սարքավորումներով աշխատողներ					
2002	0,03	0,02	-	0,2	-
2003	2,3	3,4	-	-	-
2004	-	-	-	-	-
2005	-	0,2	-	-	-

Վնասակար և վտանգավոր պայմաններում աշխատողների՝ ըստ սեռի և տնտեսության ճյուղերի, բաշխման վիճակագրությունը տրված է հետևյալ աղյուսակում:

Ճյուղում ըստ սեռի զբաղվածների թվի %

	1000 մարդ կազմակերպություններում							
	արդյունաբերություն		շինարարություն		տրանսպորտ		կապ	
	2004	2005	2004	2005	2004	2005	2004	2005
սանիտարա-հիգիենիկ նորմերին չհամապատասխանող պայմաններում աշխատողներ								
տղամարդ	4,7	4,7	-	0,4	2,4	2,2	-	-
կին	1,5	2,0	-	0,1	13,5	12,2	-	-
ծանր ֆիզիկական աշխատանքով զբաղվածներ								
տղամարդ	0,8	1,4	8,2	1,9	0,6	0,2	-	-
կին	-	0,5	0,6	-	6,1	4,8	-	-
աղմուկի, ինֆրա և ուլտրաձայների բարձր մակարդակի պայմաններում աշխատողներ								
տղամարդ	1,5	1,2	-	0,2	1,4	0,9	-	-
կին	0,4	0,6	-	-	7,5	5,4	-	-
աշխատանքային գոտում թույլատրվածից բարձր փոշոտվածության պայմաններում աշխատողներ								
տղամարդ	3,2	3,5	-	0,2	1,0	1,3	-	-
կին	1,1	1,4	-	0,1	6,0	6,8	-	-

6.9. Հաշվառման ոչ լրիվության մասշտաբի գնահատումը

Յուրաքանչյուր տարվա վերջին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի համապատասխան բաժինը կատարում է ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների և ճյուղային արհմիությունների մասնագետների կողմից հետաքննված դեպքերի համեմատում: Հակասություն նկատվելու դեպքում արդյունքներում ուղղում է մտցվում: Այսպես, ճյուղային արհմիությունների տվյալներով 2005թ. հետաքննվել է մահվան ելքով 17 դեպք, իսկ վիճակագրական ծառայություն ներկայացված տվյալներով՝ 11: Վիճակագրական ծառայությանը հաջողվեց պարզել թաքցրած դեպքերը և ուղղել արդյունքը: Բայց միշտ չի հաջողվում պարզել թաքցրած դեպքերը: Այսպես, 2007թ. ճյուղային արհմիությունների կողմից հետաքննվել է 30 պատահար, մինչդեռ վիճակագրական ծառայության հաշվետվություններով 22 պատահար է եղել, 2006թ. 21 դեպք-արհմիություններ, 17-վիճակագրական ծառայություն, իսկ մամուլում տպագրված աշխատանքի պետական տեսչության զեկույցի տվյալներով, 2006թ. հաշվառվել է ընդամենը 26 դժբախտ պատահար, մինչդեռ ըստ վիճակագրական ծառայության 2006թ. եղել է 100 դժբախտ պատահար, որոնցից 17-ը մահվան ելք է ունեցել: Մահվան ելքով դժբախտ պատահարների՝ ըստ ճյուղերի բաշխումը 2002-2006թ.թ., որոնց հետաքննությանը մասնակցել են ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի մասնագետները, բերված է հաջորդ աղյուսակում:

Ճյուղի անվանումը	2002	2003	2004	2005	2006
Գյուղարդյունաբերական համալիր	-	-	-	1	-
Կոմունալ-կենցաղային ծեռնարկություններ	2	2	2	1	-
Շինարարական կազմակերպություններ	2	2	4	-	5
Լեռնա-մետալուրգիական արդյունաբերություն	2	3	7	7	8
Էներգետիկա	5	7	7	6	4
Երկաթուղի	-	1	4	-	2
Մեքենաշինություն	1	2	2	1	-
Քիմիա	1	-	1	-	-
Տրանսպորտ	-	1	1	1	-
Երկրաբանություն	-	1	2	-	-
Առողջապահություն	-	-	-	-	1
Բանկեր	-	-	-	-	1
Ընդամենը	13	19	30	17	21
Վիճակագրության պաշտոնական տվյալներ	15	27	22	17	17

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ. ԱՌԱՆՁԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

7.1. Պարբերական միջոցառումներ ազգային մակարդակով

Չեն իրականացվում:

7.1.1. Ազգային նախաձեռնություններ

Աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտում իրավահարաբերությունների կատարելագործման նպատակով նախատեսվում է ՀՀ կառավարության մի շարք, ԵԽ-ի դիրեկտիվներին և ԱՄԿ կոնվենցիաներին համապատասխանող, որոշումների ընդունում:

7.1.2. Նախաձեռնություններն արդյունաբերությունում

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 253 հոդվածի համաձայն, գործատուն, աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ ստեղծելու նպատակով, կարող է ստեղծել ձեռնարկության աշխատողների առողջության և անվտանգության ապահովման հարցերով զբաղվող հանձնաժողով:

Աշխատողների առողջության և անվտանգության ապահովման հարցերով զբաղվող հանձնաժողովի գործունեության կարգը հաստատված է ՀՀ կառավարության 29.06.2006թ. թիվ 1007 որոշումով:

Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են ձեռնարկությունում մասնագիտական ռիսկերի բացահայտումը, աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների ստեղծման նպատակով միջոցառումների մշակումը, աշխատանքի պաշտպանության նորմատիվ ակտերի ներդրմանը նպաստելը, աշխատանքի պայմանների բարելավմանն ուղղված աշխատողների առաջարկների խրախուսումը, աշխատողների առողջական վիճակի հետազոտման կազմակերպումը:

Հանձնաժողովը կազմվում է գործատուի և արհմիութենական կազմակերպության հավասար թվով ներկայացուցիչներից: Նրա թվային կազմն հաստատվում է փոխհամաձայնության հիման վրա, բայց 6-ից ոչ քիչ՝ կախված աշխատողների ընդհանուր թվից և ձեռնարկության առանձնահատկություններից: Արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչներն ընտրվում են ընդհանուր ժողովում, գործատուի ներկայացուցիչները՝ գործատուի հրամանով: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Հանձնաժողովի նախագահ չի կարող ընտրվել աշխատանքի պաշտպանության ծառայության աշխատողը: Հանձնաժողովի կազմն հաստատվում է տնօրենի հրամանով:

Հանձնաժողովը կազմակերպում է իր աշխատանքը հանձնաժողովի հաստատած կանոնադրությանն համապատասխան:

Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց երեք ամիսը մեկ անգամից ոչ հազվադեպ: Պարբերաբար, տարին մեկ անգամից ոչ հազվադեպ, հանձնաժողովը աշխատանքային կոլեկտիվին տեղեկատվություն

է տրամադրում կատարված աշխատանքի մասին: Այժմ գործում են 50 այդպիսի հանձնաժողովներ:

7.1.3. Աշխատանքի պաշտպանության ոլորտում արհմիությունների գործունեությունն ու նախաձեռնությունները

Ինչպես արդեն նշվել է 6.1 կետում, արհմիութենական կազմակերպության ներկայացուցիչները չեն ընդգրկվում դժբախտ պատահարների ծառայողական քննություն կատարող հանձնաժողովների կազմում, և նախատեսված չէ դժբախտ պատահարների մասին տվյալների տրամադրումը նրանց: Այնուամենայնիվ, արհմիությունները փնտրում են արտադրական դժբախտ պատահարների պատճառների վերլուծություն կատարելու հնարավորություններ, մշակում են այդ պատահարների պատճառների վերացման միջոցառումներ, ձգտում են դրանք ընդգրկել ճյուղային և ձեռնարկությունների կոլեկտիվ պայմանագրերի մեջ: Այսպես, լեռնամետալուրգիական աշխատողների արհմիութենական կազմակերպությունների հանրապետական ճյուղային միությունն իր նախաձեռնությամբ պայմանագիր է կնքել տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի հետ, որով նախատեսվում է առանձնապես վտանգավոր արդյունաբերական օբյեկտներում դժբախտ պատահարների համատեղ տեխնիկական քննություն կատարել: Արդեն կատարվել է այդպիսի 27 քննություն:

<< քրեական օրենսդրության համաձայն դատախազության քննիչն իրավասու է հրավիրել տվյալ ճյուղի մասնագետների կամ փորձագետների՝ դժբախտ պատահարի մասին եզրակացություն տալու կամ այդ պատահարի պատճառները բացահայտելու, ինչպես նաև բացահայտելու անվտանգության կանոնները խախտած պատասխանատու անձանց, ինչի հետևանքով տեղի է ունեցել դժբախտ պատահար: Արհմիությունների նախաձեռնությամբ հաճախ որպես փորձագետ հրավիրվում են արհմիությունների մասնագետները, ինչը հնարավորություն է տալիս ժամանակին անցկացնելու քննություն, լուծելու վնասի հատուցման հարցերը և ստանալու տեղեկատվություն: Այսպես, հանրապետական ճյուղային արհմիությունների մասնագետները 5 տարվա ընթացքում եզրակացություն են տվել 100 մահվան ելքով պատահարների մասին:

Արհմիություններն անցկացնում են սեմինարներ, արհմիութենական ակտիվի, աշխատանքի անվտանգ մեթոդների ուսուցում: Այդպիսի սեմինարներ անցկացվում են բոլոր ճյուղային արհմիությունների կողմից, նաև՝ տարածքային մակարդակով:

Արհմիությունների կոնֆեդերացիան հատուկ ձև է մշակել, որի համաձայն ճյուղային կոմիտեները տարին մեկ անգամ, փետրվարի 25-ից ոչ ուշ ներկայացնում են ձեռնարկություններում կնքված կոլեկտիվ պայմանագրերի քանակի, հետաքննված դժբախտ պատահարների, ներառյալ՝ մահվան ելքով, ինչպես նաև՝ առողջության և անվտանգության ապահովման հարցերով ստեղծված հանձնաժողովների քանակի մասին տվյալներ:

7.2. Միջազգային համագործակցություն

7.2.1. Աշխատանքի պաշտպանության համաշխարհային օրը

2005թ. աշխատանքի պաշտպանության համաշխարհային օրը, ապրիլի 28-ը շուքով նշվեց «Ամաստ» գործարանում, գործարանի վարչական ղեկավարության և արհմիութենական կազմակերպության միջև ստորագրվեց համաձայնագիր աշխատանքի պաշտպանության հարցերի վերաբերյալ:

Այդ օրը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչները ելույթ են ունենում և ներկայացնում աշխատանքի պաշտպանության ոլորտում անցած տարում կատարված աշխատանքը:

7.2.2. Համագործակցության պայմանագրերն ու ծրագրերն ԱՄԿ-ի և այլ միջազգային գործակալությունների ու պետությունների (նրանց միությունների) հետ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը, ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիան աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտի, ինչպես նաև աշխատանքի առողջ պայմանների ապահովման հարցերով սերտորեն համագործակցում են Աշխատանքի Միջազգային Կազմակերպության, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության, արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի և ԵԽ-ի համապատասխան կառույցների հետ:

2004թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության, ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունվեց 2004-2006թ.թ. տեխնիկական համագործակցության ծրագիր, որտեղ մասնավորապես նախատեսված են սոցիալական գործընկերության, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման, հիգիենայի և սոցիալական ապահովագրության մեխանիզմների կատարելագործման միջոցառումներ:

2007թ. մարտի 26-ին ստորագրվեց «Արժանապատիվ աշխատանքն Հայաստանի Հանրապետությունում 2007-2011թթ.» ծրագիրը: Ծրագրի նպատակն է խթանել արժանապատիվ աշխատանքը՝ որպես երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչ: Ծրագիրն համահունչ է այն բազմակողմանի մոտեցումներին, որոնք ձևակերպված են այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են «Հազարամյակի զարգացման նպատակները», «2003-2015թ.թ. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», «ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագիրը», «Ազգային զարգացման 2007-2009թ.թ. ռազմավարությունը», «Միջնաժամկետային ծախսերի ծրագիրը»:

Այս ծրագիրն արտացոլում է Հայաստանում ԱՄԿ-ի լիազոր գործընկերների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության, ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի, գերակալությունների: Ծրագիրը

նախագծում է արժանապատիվ աշխատանք ապահովելու գործում քաղաքականությունը, ռազմավարությունը և սպասվող արդյունքները: Այն հաստատում է 2007-2011թ.թ. ԱՄԿ-ի և ՀՀ-ի համագործակցության ռազմավարությունը: Այժմ գործընկերների կողմից ընդունվել է ծրագրի իրագործման աշխատանքների պլանը: Ծրագրում և ծրագրի իրագործման աշխատանքների պլանում նշանակալի տեղ ունեն աշխատանքի անվտանգության և պաշտպանության, սոցիալական պաշտպանության կատարելագործման հարցերը:

7.2.3. Աշխատանքի պաշտպանության Ազգային տեղեկատվական կենտրոնի և համագործակցող ԱՄԿ կենտրոնների գործունեությունը

Գոյություն չունի:

8. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն նկարագրի մշակման գործընթացը կրկին հաստատեց այն փաստը, որ այս համակարգին ուշադրություն հատկացնող կազմակերպություններն ու ձեռնարկությունները բարձր ցուցանիշերի են հասնում ոչ միայն աշխատանքի պաշտպանության ոլորտում, այլ նաև բուն արտադրության ոլորտում, քան այդպիսի համակարգ չունեցող կազմակերպությունները: Աշխատանքի անվտանգության միջազգային չափորոշիչների ներդրման դժվարությունը մեծ չափով պայմանավորված է այն բանով, որ ճյուղային նախարարությունների և գերատեսչություններում կրճատվել են նախկինում գործող բաժինները, որոնք զբաղվում էին աշխատանքի պաշտպանության և անվտանգության հարցերի ապահովմամբ և համակարգումով, իսկ եթե այդպիսի կառույցներ գոյություն ունեն էլ, ապա կազմված են անբավարար որակավորում ունեցող կադրերից: Մեր կարծիքով, արտադրական դժբախտ պատահարների աճին, հատկապես մահացու դեպքերին, մեծ չափով նպաստում է աշխատանքի անվտանգության և պաշտպանության ոլորտի նորմատիվ-իրավական բազայի անկատարությունն ու նրա հետ մնալը երկրի տնտեսական զարգացման տեմպերից, շատ նորմատիվների բացակայությունը, ինչպես նաև այդ հարցերին մնացուկային մոտեցումն ինչպես պետական մարմինների, այնպես էլ շատ գործատուների կողմից: Իր դերն ունի նաև արհմիությունների անբավարար հնարավորությունը:

ԱՄԿ «Աշխատանքի պաշտպանության համակարգերի կառավարման ձեռնարկ» 2001-ի, ինչպես նաև ԵԽ-ի համապատասխան դիրեկտիվների, ընդունումը և իրագործումը կենսական անհրաժեշտություն է դարձել: Երկրում գոյություն ունեցող յուրաքանչյուր վերահսկող մարմին ունի դժբախտ պատահարների հետաքննությունների վարման իր կարգը, որը մյուսներից տարբերվում է հանձնաժողովի կազմով, փաստաթղթերի հավաքման կարգով և այլն: Հաշվետվության միասնական ձևի բացակայությունը հանդիսանում է դժբախտ պատահարների, ներառյալ՝ մահացու ելքով, իրական թվի և պաշտոնական տվյալների անհամապատասխանության հիմնական պատճառը: Չկա համակարգային մոտեցում աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերին: Առողջ և անվտանգ աշխատանքի ազգային ծրագրի մշակումը կլրացնի այդ բացը: Հայաստանում դժբախտ պատահարների մեծ մասը տեղի է ունենում տնտեսության առաջնային հատվածում՝ էներգետիկա, շինարարություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, լեռնարդյունաբերություն: Գործատուների կողմից անբավարար ուշադրությունն աշխատանքի պաշտպանության հարցերին, անվտանգության տեխնիկայի ուսուցմանը, հրահանգավորումների ձևական անցկացումը հանգեցնում են արտադրական վնասվածքների, մահացության և մասնագիտական հիվանդությունների բարձր ցուցանիշերի: Այստեղ տեղին է նշել դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻՑ ԲԽՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս նկարագրի մշակումը ցույց տվեց, որ Հայաստանում աշխատանքի պաշտպանության համակարգը հետագա զարգացման և կատարելագործման կարիք ունի: Նպատակահարմար է համարվում հետևյալ խնդիրների լուծումը.

1. Հանրապետությունում ժամանակի աճող պայմաններին համապատասխանող աշխատանքի պաշտպանության կառավարման կատարյալ համակարգի մշակում և ներդրում,

2. Աշխատանքի պաշտպանության վերահսկողության պետական համակարգի հետագա զարգացում, ամրացում և կատարելագործում՝ հաշվի առնելով միջազգային փորձը,

3. Աշխատանքի պաշտպանության ոլորտի չափորոշիչների ազգային համակարգի ստեղծում և ներդրում,

4. Հանրապետության կազմակերպություններում և ձեռնարկություններում ԱՄԿ աշխատանքի պաշտպանության և անվտանգության կառավարման համակարգի, միջազգային չափորոշիչների և կառավարման ներդրում,

5. Անվտանգության ապահովման և աշխատանքի պաշտպանության ազգային ծրագրի մշակում և ընդունում,

6. «Արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունում,

7. Աշխատանքի պաշտպանության ոլորտի նորմատիվ-իրավական ակտերի բազայի կատարելագործում,

8. Աշխատանքի պաշտպանության ոլորտում պետական մարմինների, ծառայությունների, տեսչությունների, լաբորատորիաների գործունեությունը համակարգելու նպատակով համալիր միջոցների մշակում,

9. Մարզային և տարածքային մակարդակներում գործուն սոցիալական գործընկերության ստեղծում: Սոցիալական գործընկերներին, եռակողմ համաձայնությամբ, աշխատանքի անվտանգության և պաշտպանության հարցերի վերապահում,

10. Աշխատանքի պաշտպանության ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման համակարգի և կառույցների ստեղծում, համապատասխան գիտահետազոտական բազայի ձևավորում,

11. Ձեռնարկությունների և կազմակերպությունների ապահովում ուսումնամեթոդական գրականությամբ, աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային և ճանապարհային անվտանգության հրահանգներով,

12. Աշխատանքի պաշտպանության ոլորտում գործատուների գործունեությունը խթանելու և կարգավորելու տնտեսական մեթոդների կատարելագործման նպատակով օրենսդրական նախաձեռնությունների իրականացում:

1. Աշխատանքի պաշտպանության և արտադրության անվտանգության հիմնական օրենքներն ու այլ նորմատիվ իրավական ակտեր

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրություն
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք
3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք
4. ՀՀ հարկային օրենսդրություն
5. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք 05.05.1998թ.
6. «Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» ՀՀ օրենք
7. «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենք
8. «Գործատուների մասին» ՀՀ օրենք 27.02.2007թ.
9. «Հակահրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենք 18.04.2001թ.
10. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք 02.12.1998թ
11. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք 04.03.1996թ.
12. «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք 16.11.1992թ.
13. «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենք 24.10.2005թ.
14. «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենք 24.03.2005թ.
15. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք 24.10.2005թ
16. «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք 24.10.2005թ.
17. «Արհմիությունների մասին» ՀՀ օրենք 24.10.2006թ.
18. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենք 12.12.1985թ.
19. «Աշխատավարձի մասին» ՀՀ օրենք, 2003թ. մարտ
20. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք 08.07.2005թ.
21. «Մթերային ապրանքների անվտանգության մասին» ՀՀ օրենք 27.10.2006թ.
22. «Անհատական պաշտպանության միջոցների վերաբերյալ տեխնիկական կանոնի հաստատման մասին» ՀՀ օրենք 14.12.2004թ.
23. «Էլեկտրաէներգետիկայի համակարգում և էլեկտրասպառման ոլորտում տեխնիկական հսկողության մասին» ՀՀ օրենք 14.12.2006թ.
24. «ՀՀ տրանսպորտային տեսչության մասին» ՀՀ օրենք 05.12.2006թ.
25. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 03.03.2002թ.
26. «Մթերային ապրանքների տեսչության մասին» ՀՀ օրենք
27. ՀՀ կառավարության 11.12.2003թ. «Առողջության համար վնասակար և առանձնապես վնասակար ու ծանր աշխատանքի պայմաններ ունեցող մասնագիտությունների ցուցակների հաստատման մասին» թիվ 1907 որոշում
28. ՀՀ կառավարության 12.04.2007թ. «Էլեկտրասարքերի վրա վթարների և դժբախտ պատահարների հատուկ քննությունների կարգի մասին» թիվ 580-Ն որոշում
29. ՀՀ կառավարության 09.12.2004թ. «Ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքավորումների կամ ճառագայթում առաջացնող աղբյուրների տեղափոխման աշխատանքների լիցենզավորման ձևերի և կարգի հաստատման մասին» թիվ 1791- Ն որոշում

30. ՀՀ կառավարության 09.12.2004թ. «Ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքավորումների կամ ճառագայթում առաջացնող աղբյուրների պահեստավորման աշխատանքների լիցենզավորման ձևերի և կարգի հաստատման մասին» թիվ 1792-Ն որոշում
31. ՀՀ կառավարության 09.12.2004թ. «Ռադիոակտիվ նյութերի, ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքավորումների կամ ճառագայթում առաջացնող աղբյուրների օգտագործման աշխատանքների լիցենզավորման ձևերի և կարգի հաստատման մասին» թիվ 1751-Ն որոշում
32. ՀՀ կառավարության «Էլեկտրաէներգետիկայի համակարգում տեղի ունեցող դժբախտ դեպքերի դասակարգման և նրանց հատուկ քննության կարգի հաստատման մասին և ՀՀ կառավարության թիվ 1530-ն 18.8.2005թ. որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում
33. ՀՀ կառավարության 15.12.2005թ. «Մեքենաներին և սարքավորումներին տեխնիկական անվտանգության պահանջների ներկայացման կարգի հաստատման մասին» թիվ 2390-Ն որոշում
34. ՀՀ կառավարության 11.08.2005թ. «Աշխատողների առանձին կատեգորիաների, որոնց տրվում է լրացուցիչ և երկարացված արձակուրդ, ցուցակների հաստատման մասին» որոշում
35. ՀՀ կառավարության 01.06.2005թ. «Էներգետիկայի պետական տեսչության կանոնադրության մեջ և կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին» որոշում
36. ՀՀ կառավարության 29.07.2004թ. «Աշխատանքի պետական տեսչության կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում
37. ՀՀ կառավարության 15.07.2004թ. «Առողջական վիճակի պարտադիր նախնական զննության անցկացման կարգի մասին, ոլորտների մասին, որոնցում զբաղվածները ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության, բժշկական զննության անցկացման հաճախականության ու ծավալի, անձնական բժշկական գրքույկի ձևի և բժշկական զննության ենթակա անձանց անվանական ցուցակների հաստատման մասին» թիվ 1089-Ն որոշում
38. ՀՀ կառավարության 13.04.2006թ. «Տեխնածին վթարների և ծանր կամ մահացու ելքով արտադրությունում դժբախտ դեպքերի տեխնիկական քննության և հաշվառման մասին» թիվ 488-Ն որոշում
39. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 31.07.2006թ. թիվ 169-Ն հրաման «Վտանգավոր արդյունաբերական օբյեկտների կամ այդ օբյեկտներում տեղադրված տեխնիկական միջոցների և սարքավորումների շահագործումը, տեխնիկական անվտանգության նորմերն ու պահանջները խախտելու դեպքում, արգելելու մասին ակտերի ձևերի հաստատման մասին»
40. ՀՀ կառավարության 04.09.2006թ. «Վտանգավոր արդյունաբերական օբյեկտ շահագործող անձանց տեղեկատվություն տրամադրելու ձևի հաստատման մասին» թիվ 177-Ն որոշում
41. ՀՀ կառավարության 16.5.2006թ. «Վտանգավոր արդյունաբերական օբյեկտի տեխնիկական անվտանգության վկայականի նկատմամբ պահանջների հաստատման մասին» թիվ 88-Ն որոշում
42. ՀՀ կառավարության 13.10.2005թ. «Կենսաթոշակային ապահովման իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշերի թիվ 1 և 2 ցուցակների հաստատման մասին» թիվ 1987-Ն որոշում
43. ՀՀ կառավարության 16.02.2006թ. «Վնասակար նյութերի թույլատրելի սահմանային խտության հաստատման մասին» թիվ 182-Ն որոշում
44. ՀՀ կառավարության 11.05.2006թ. «Դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների հետ կապված մասնագիտական աշխատունակության աստիճանի հաստատման կարգի մասին» թիվ 619-Ն որոշում

2. Աշխատանքի պաշտպանության և արտադրության անվտանգության հետ կապված պաշտոնական կայքերի և տեղեկատվական աղբյուրների ցանկ

Հայաստանի Հանրապետության նախագահի կայք՝ www.president.am
ՀՀ Ազգային ժողովի կայք՝ www.parliament.am
ՀՀ կառավարության կայք՝ www.gov.am
ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կայք՝ www.armstat.am
ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայք՝ www.mss.am
ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կայք՝ www.mta.am
ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կայք՝ www.mineconomy.am
ՀՀ Առողջապահության նախարարության կայք՝ www.moh.am
ՀՀ Բնապահպանության նախարարության կայք՝ www.nature.am
ՀՀ Քաղաքաշինության նախարարության կայք՝ www.am
ՀՀ Էներգետիկայի նախարարության կայք՝ www.minenergy.am
ՀՀ Գյուղատնտեսության նախարարության կայք՝ www.minagro.am
ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության կայք՝ www.mtc.am
Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության կայք՝ www.umba.com

3. ՄԱԿ-ի մարդկային զարգացման ծրագրի զեկույցի համաձայն, 2007թ. Հայաստանը 177 երկրների մեջ զբաղեցնում է 83-երորդ տեղը

Հայաստանը դասվում է մարդկային ներուժի զարգացման միջին մակարդակ ունեցող երկրների շարքին: Հայաստանի մարդկային զարգացման ինդեքսը (ՄՁԻ) կազմում է 0,775:

Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 1785\$:


Կյանքի միջին տևողությունը՝ 71,7 տարի:

Գրագիտության մակարդակը՝ 99,4:

4. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մի քանի ցուցանիշներ, 2006թ.

	Հունվար-դեկտեմբեր 2006թ.	Հունվար-դեկտեմբեր. 2006թ Հունվար-դեկտեմբեր 2005թ %	դեկտեմբեր 2006թ. նոյեմբեր %
Համախառն ներքին արտադրանք, մլն դրամ			
շուկայական գներով	2665036,6	113,4	142,2
հիմնական գներով	2447072,8	113,6	x
ՀՆԱ-ի ինդեքս (ՀՆԱ-ի ընթացիկ գներով հաշված հարաբերությունը անցած տարվա գներով ՀՆԱ-ի) ծավալին %	x	104,8	x
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն դրամ	643503,7	99,1	108,0
Սպառողական ապրանքների արտադրությունը, մլն դրամ	230852,6	102,1	x
Էլեկտրաէներգիայի արտադրությունը, մլն դրամ	5940,8	94,1	137,7
Գյուղատնտեսական համախառն արտադրանք, մլն դրամ	555922,3	100,4	109,7
Շինարարություն			
Շինարարության ծավալը, մլն դրամ	623111,5	137,1	131,4
Շահագործման հանձնված բնակելի շենքեր, հազ. մ. ² տարածք	365721	106,6	78,9
Արտաքին առևտրաշրջանառություն			
մլն դոլար	3198,3	115,2	112,4
մլն դրամ	1314,4	x	x
Ապրանքների արտահանում			
մլն դոլար	1004,0	103,1	129,8
մլն դրամ	412,2	x	x
Ապրանքների ներմուծում			
մլն դոլար	2194,3	121,8	106,0
մլն դրամ	902,2	x	x
Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ (գնահատական) դրամ	64001	123,5	119,6
Բնակչության դրամական եկամուտ, մլն դրամ	1722253,7	119,8	162,4
Բնակչության ենթադրվող ռեալ եկամուտ, մլն դրամ	158943,2	116,7	161,3
Սպառողական գների ինդեքս %	x	102,9	101,6

5. ՀՆԱ-ի աճի տեմպերը (%)



6. Հայաստանի աշխատուժը


Հայաստանի բնակչության հիմնական մասը կազմում են 17- 59 տարեկան անձինք:

մոտ 60 բուհ և 77000 ուսանող

8 արտասահմանյան համալսարաններ, այդ թվում.

- ◆ Հայաստանում Ամերիկյան համալսարան;
- ◆ Ֆրանսիական համալսարան;
- ◆ Եվրոպական համալսարան.

մոտ 96 ԳՀԻ և հետազոտական կենտրոններ
բնակչության կրթվածությունը՝ 99%:



7. Հայաստանի Հանրապետության աշխատանքային ռեսուրսները (հազար մարդ)

	2001	2002	2003	2004	2005
Աշխատանքային ռեսուրսներ	2406,2	1976,9	2008,4	2041,5	2072,4
տնտեսապես ակտիվ բնակչություն	21411,7	1240,1	1232,4	1196,5	1195,8
տնտեսության ճյուղերում զբաղվածներ	1264,9	1106,4	1107,6	1081,7	1097,8
այդ թվում պետական հատվածում	313,3	285,8	257,8	228,2	217,3
ոչ պետական հատվածում	951,6	820,6	849,8	853,5	880,5
գյուղ. տնտեսություններում զբաղվածներ	553,6	492,8	503,5	501,6	502,3
ինքնազբաղված բնակչություն	55	60,0	62,7	64,9	66,2
այլ զբաղված բնակչություն	656,3	553,6	541,4	515,2	529,3
պաշտոնապես գրանցված գործազուրկներ	146,8	133,7	124,8	114,8	98
աշխատանքային ռեսուրսների նկատմամբ %					
տնտեսապես ակտիվ բնակչություն	58,7	62,7	61,4	58,6	57,7
տնտեսության ճյուղերում զբաղվածներ	52,6	56,0	55,1	53,0	53,0
գյուղ. տնտեսություններում զբաղվածներ	23,0	24,9	25,1	24,6	24,2
ինքնազբաղված բնակչություն	2,3	3,0	3,1	3,2	3,2
այլ զբաղված բնակչություն	27,3	28	27,0	25,2	25,5

8. Զբաղվածների տարեկան միջին թվաքանակն ըստ տնտեսության ճյուղերի (1000 մարդ)

	2001	2002	2003	2004	2005
ընդամենը տնտեսության ճյուղերում	1264,9	1106,4	1107,6	1081,7	1097,8
արդյունաբերություն	169,6	143,1	138,8	132,0	134,6
գյուղատնտեսություն	570,0	500,8	509,0	507,1	507,6
շինարարություն	41,2	36,1	37,2	33,3	34,6
տրանսպորտ և կապ	44,2	40,2	41,8	46,5	49,7
առևտուր և հասարակական սնունդ	110,5	99,6	105,0	103,8	108,9
բնակարանային-կոմունալ տնտեսություն, բնակչության սպասարկման ոչ արտադրողական տեսակներ	37,0	30,2	32,6	33,0	34,4
առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	79,3	66,9	60,3	49,8	50,6
կրթություն, մշակույթ, արվեստ	155,2	138,3	132,2	120,6	119,0
գիտություն և գիտական սպասարկում	14,6	13,2	12,3	12,2	14,0
վարկավորում և ապահովագրություն	6,7	5,2	5,0	5,6	6,6
կառավարման ապարատ	25,2	23,8	25,0	26,6	28,2
այլ ճյուղեր	11,4	9,0	8,0	11,2	10,1

9. Զբաղվածների և գործազուրկների թվի բաշխումն ըստ սեռի (1000 մարդ)

	2001	2002	2003	2004	2005
տնտեսությունում զբաղվածների միջին տարեկան քանակը	1264,9	1106,4	1107,6	1081, 7	1097,8
տղամարդիկ	682,9	582,1	581,8	584,2	597,1
կանայք	582,0	524,3	525,8	497,5	500,7
պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին տարեկան քանակը	146,8	133,7	124,8	114,8	98
տղամարդիկ	50,9	44,9	40,1	35,0	29
կանայք	95,9	88,8	84,7	79,8	64
երիտասարդներ 16-30 տարեկան	39,8	35,9	33,4	22,0	13,3

10. Տնտեսության ճյուղերում և հատվածներում զբաղվածների թվաքանակը 2005թ. (1000)մարդ

	ընդամենը	պետական հատված	ոչ պետական հատված
ընդամենը տնտեսության ճյուղերում	1097,8	217,3	880,5
արդյունաբերություն	134,6	7,7	126,9
գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	507,6	3,7	503,9
շինարարություն	34,6	1,7	32,9
տրանսպորտ և կապ	49,7	12,9	36,9
առևտուր և հասարակական սնունդ	108,9	0,2	108,7
բնակարանային-կոմունալ տնտեսություն, բնակչության կենցաղ սպասարկում	34,4	2,5	31,9
առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	50,6	39,3	11,3
գիտություն և գիտական սպասարկում	14,0	10,0	4,0
վարկավորում և ապահովագրություն	6,1	0,6	5,5
կառավարման ապարատ	28,2	27,2	1,0
այլ ճյուղեր	10,1	3,8	6,3


11. Բնակչության բաշխումն ըստ սեռա-տարիքային կազմի 01.01.06թ. դրությամբ (1000 մարդ)

տարիք	տղամարդիկ	կանայք	ընդամենը
ողջ բնակչությունը	1554	1665	3219,2
տարիքը	19,9	17,2	37,1
1-4	76,2	66,0	142,2
5-9	111,8	98,7	210,5
10-14	141,1	133,6	274,7
15-19	162,2	158,0	320,2
20-24	152,7	151,8	304,5
25-29	126,1	128,8	254,9
30-34	101,6	108,9	210,5
35-39	96,6	105,8	202,4
40-44	119,7	133,2	252,9
45-49	123,1	136,3	259,4
50-54	89,7	103,4	193,1
55-59	60,5	73,1	133,6
60-64	33,4	43,3	76,7
65 և բարձր	139,5	207,0	346,5

12. Տնտեսական ազատության ինդեքսը

Երկիր	2002	2003	2004	2005	2006	2007
Հայաստան	45	44	44	42	27	32
Ադրբեջան	118	104	106	103	123	107
Վրաստան	108	113	91	100	68	35
Ֆրանսիա	45	40	44	44	44	45
Գերմանիա	20	19	18	18	19	19
Հունգարիա	32	44	42	35	40	44
Իրան	151	146	148	148	156	150
Լեհաստան	45	66	56	41	41	87
Ռուսաստան	131	135	114	124	122	120
Թուրքիա	105	119	106	112	85	83
Ուկրաինա	137	131	117	88	99	125
ԱՄՆ	4	6	10	12	9	4

13. Արտահանության տարեկան աճը 2002-2006թթ. 2001թ. համեմատությամբ



14. Մասնագիտական հիվանդությունների դինամիկան

Հաշվառման վերջված հաշմանդամների թվաքանակի՝ ըստ սեռի բաշխումը հաշմանդամության պատճառներով և խմբերով 2005թ.

	1 խումբ		11 խումբ		111 խումբ		Երեխա-հաշմանդամ	
	ընդամենը	հազար կին	ընդամենը	հազար կին	ընդամենը	հազար կին		
աշխատանքային վնասվածք	196	35	1114	220	1787	295	-	-
մասնագիտական հիվանդություն	22	4	277	65	229	35	-	-

Հաշվառման վերցված հաշմանդամ քաղաքացիների թվաքանակի՝ ըստ սեռի բաշխումը հաշմանդամության պատճառներով և խմբերով, 2005թ.

	1 խումբ		11 խումբ		111 խումբ		Երեխա-հաշմանդամ	
	ընդամենը	հազար կին	ընդամենը	հազար կին	ընդամենը	հազար կին		
աշխատանքային վնասվածք	139	26	785	154	1284	224	-	-
մասնագիտական հիվանդություն	20	3	236	57	181	28	-	-

Հաշվառման վերցված հաշմանդամների թվաքանակի՝ ըստ սեռի բաշխումը հաշմանդամության պատճառներով և խմբերով 2006թ.

	1 խումբ		11 խումբ		111 խումբ		Երեխա-հաշմանդամ	
	ընդամենը	հազար կին	ընդամենը	հազար կին	ընդամենը	հազար կին		
աշխատանքային վնասվածք	200	36	1099	219	1703	277	-	-
մասնագիտական հիվանդություն	21	4	260	63	212	34	-	-

Առաջին անգամ հաշմանդամ ճանաչվածների թվաքանակի՝ ըստ սեռի բաշխումը հաշմանդամության պատճառներով 2006թ.

	ճանաչվել են հաշմանդամ		նրանցից աշխատանքային տարիքի	
	ընդամենը	նրանցից. կանայք	ընդամենը	նրանցից. կանայք
աշխատանքային վնասվածք	15	2	13	2
մասնագիտական հիվանդություն	1	-	-	-

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ

**OCCUPATIONAL SAFETY AND HEALTH
REPUBLIC OF ARMENIA
NATIONAL PROFILE**

«Նոյյան Տապան» տպագրատուն
ՀՀ, Երեւան 0009, Իսահակյան 28, հեռ. (374 10) 565965
E-mail: contact@nt.am
URL: <http://www.nt.am>